


335

L-50



335.8

L-50

335

L-50

Վ. ԼԻԲԿՆԵԽՏ

ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ

■ ■ ■ ■ ■ ■ ■ ■

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

10-2 MAY 2013

26 SEP 2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

05 JAN 2010

Պրոխարեներ բոլոր յերկրների, միացեր.

Գ. ԼԻԲԿՆԵԻՏ

ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ

Ռուսերենից թարգմ.

Հայկ Հով.

1008
36742



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1924.

ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐՀ.

Վ. Լիբկնեխտի հատր, վոր արտասանել ե 1871 թ. հոկտեմբերի 22-ին Կրիմմիտշաու քաղաքում հիմնած ժողովրդական միության տարեգարծի առթիվ:

Բարեկամներ, գերմանական ղեմակրատիայի ավագ Հովհաննես Յակորին իր «Բանվորական շարժման նպատակների մասին» նշանավոր ճառի մեջ ասել ե. «Քաղաքակրթության ապագա պատմաբանի համար ամենաառավելի բանվորական միության կազմակերպությունն ավելի մեծ նշանակություն կունենա, քան Սադովայի մոտ տեղի ունեցած կռիվ որը»: Յեթե նա այս բանն ասեր մի տարի հետո, կարող եր ավելացնել նաև՝ և քան «պարոն պարոն Բոնապարտի և Բիսմարկի սրբազան պատերազմի» բոլոր «փայլուն հաղթանակներն» ու զեղեցիկ «հեծելազորային ճակատամարտները»:

Թեև այս «Կրիմմիտշաուի ժողովրդական միությունը», վորի հիմնարկության տոնն են կատարում այսօր, բանվորական միություն անունը չե կրում, բայց բացառապես բանվորներից ե բաղկացած և հետևում ե սոցիալ-դեմոկրատիայի սկզբունքներին. հենց այդ պատճառով ել ելությամբ բանվորական միություն ե և Յակորիի խոսքերը վերսրերում են նաև սրան:

Այն, ամենաառավելի բանվորական միության

կազմակերպութիւնն ավելի նշանավոր քաղաքակրթական գործն է, քան այն բոլոր «մեծ գործերը», վոր կատարել է ռազմական և միապետական Յեկրոպան և վոր դեռ պետք է կատարել, այսպէս կոչված, պատվի դաշտում. ամենասակավաթիվ բանվորական միութեան մեջ ապրում և ներգործում են ներկայիս գաղափարները, պատրաստվում են ծանրակշիւ հարցերի լուծումն. հարցեր, վորոնք առաջ են մղում մեր ժամանակը, այն ինչ զինվորի ձեռքը շարժում է սպանութեան գործիք հրացանը, վոր պահպանել և պաշտպանել անցյալի ստեղծագործութիւնները: Յուրաքանչյուր բանվորական միութիւն մարդկային այգու մեջ տնկած մի շիւղի է. այն այգու, վորն ավերվում է փառավոր ու հռչակավոր գործերի ձեռքով: Այդ միութիւններից ամեն մեկը ճշմարիտ կրթութեան մի դպրոց է, վորն ազատութիւն է տալիս զինվորական հաղթողների սպանալիքներին ու վիրավորանքներին յենթակա մարդուն: Նա նոր աշխարհի մի կտորն է, վոր սեպի նման խրվում է հին աշխարհի մեջ, վորպէսզի նպաստե նրա քարուքանդ լինելուն—ավերելուն:

Յերկու աշխարհ կանգնած են այժմ դեռ առ դեմ— ունևորների աշխարհ և չունևորների աշխարհ. կապիտալի աշխարհ և աշխատանքի աշխարհ. ճնշողների աշխարհ և ճնշվողների աշխարհ. բուրժուազիայի աշխարհ և սոցիալիզմի աշխարհ—յերկու աշխարհ՝ հակասական նպատակներով, ձգտումներով հայացքներով և տարբեր լոգունքներով—յերկու աշխարհ՝ վորոնք միասին իրար հանդեպ մնալ չեն կարող—և վորոնցից մեկը պետք է տեղի տա մյուսին:

Վերջին պատերազմի ժամանակ՝ կրակն գնդակ-

ների և բոցավառված քաղաքների ու գյուղերի փայլի տակ արդեն ամենակարճատես աչքն անգամ կարող եր նկատել այդ յերկու աշխարհների սուր ուղիւնքները՝ աչսեղ հին աշխարհի ներկայացուցիչներն էին, վոր ասեկութիւն և արհամարհանք էին քարոզում դեպի հարևան ժողովուրդը՝ մասսայական մարդասպանութիւնը զնկով վորպէս ամենաբարձր մարդկային նպատակ, բոլորքելով կրքերը ամեն տեսակ միջոցներով, խեղդելով միտքը և նեղսիրտ մոլեռանդ հայրենասիրութեան բեմի վրա գոհելով մարդասիրութիւնը,—այնեղ նոր աշխարհի ներկայացուցիչները, հանգիստ՝ կատաղի հեղեղի հանդեպ. լուրջ՝ ազգային գառանցանքի որդիանների հանդեպ և անդրդվելի՝ նախատինքների, մեղադրանքների, հարձակումների, հալածանքների հանդեպ, հպարտ դարձնելով իրենց գլուխները դեպի հակառակորդները՝ դիմում էին նրանց հետեյալ բացականչութեամբ.

«Եյն, ինչ վոր դուք կնքում եք ամենաազնիվ պարտականութիւն անունով, մեզ անբարոյական է թվում, այն ամենը, վոր դուք, վորպէս բարձրագույն բարիք, գովաբանում եք, հակասում է բանականութեան և արդարութեան պահանջներին: Մեր սահմանի սյուների մյուս կողմում ապրող մարդն էլ նույնպիսի մարդ է, ինչպիսին վոր մենք ենք. ժողովուրդները յեղրայրներ են և պետք է սիրեն իրար: Սպանութիւնը սպանութիւն է մնում նաև այն դեպքում, յերբ սպանողն ու սպանվողը տարբեր լեզուներով են խոսում և մի գույն ունեցող հագուստի փոխարեն հագնում են զանազանագույն հագուստներ: Սպանութիւնը հանցանք է և չի դադարիլ հանցանք լինելուց նաև

այն դեպքում, յերբ կատարվում է հսկայական չափով: Հաջողութունը յերբեք չի կարող անարդարութունը արդարութուն դարձնել: Այն, ինչ վոր դուք փառք եք անվանում, մեզ դրա բացասութունն է թվում. ինչ վոր դուք պատիվ եք անվանում, մեզ դարձյալ դրա բացասութունն է թվում. այն հաղթական հանդեսները, վորով դուք պարծենում եք, մեզ համար բարբառոսութան հաղթանակներ են. պատերազմը, լինի այդ նույնիսկ ամենափառավոր՝ հանցանք է ընդդեմ մարդկության սրբազան հոգու, դժբախտութուն է թե հաղթողի և թե հաղթվողի համար: Ձեր արտասանած «հայրենիք» բառը մեզ չի դյուրեցում. մենք արդեն դեն ենք շարտել այն հայացքը, վորով դուք եք նայում «հայրենիքի» վրա. դա մեզ համար հետադիմական և քաղաքակրթութեանը մնասակար զաղափար է. մարդկությունը չի կարող պարփակվել ազգային շրջանակների մեջ. մեր հայրենիքը—աշխարհն է. «ubi bene, ibi patria»—վորտեղ մեզ համար լավ է, վորտեղ կարող ենք մարդ լինել, այդտեղ է մեր հայրենիքը. ձեռ հայրենիքը մեզ համար չարչարանքի վայր է միայն, բանտ է, վորսկան շներով շրջապատված մի շրջան է, վորտեղ մենք ներկայանում ենք հալածված վորսի կենդանիներ և ուր շատերը մեզանից գլուխ դնելու տեղ ել չունեն: Հայհոյելով մեզ անվանում եք «հայրենիք չունեցողներ», բայց դուք ինքներդ եք մեզ այդ ուր ձգել:

Յեւ ինչպէս կարող եք դուք, դուք, վոր այդպես հանդիսավոր հավատքով խոսում եք ձեր քրիստոնեյութեան մասին, հանդիմանել մեզ «վոչ ազգայնական» լինելու համար. Արդյոք քրիստոնեյական կրօնի աշխարհ

ընկնող նշանն այն չէ, վոր սա ընդարձակեց հրեաների ազգային աստծո մասին ունեցած հասկացողութունը և դարձրեց համամարդկային աստծո զաղափար. այսինքն՝ արտահայտելով ժամանակակից ընդունված ձևով,—խորտակեց ազգայնութեան սկզբունքը և դուրս ձգելով ազգայնական միտքը՝ նրա տեղ դրեց միջազգայինը:

Ձեր մեջ խոսում է միայն նախապաշարմունքն ու շահամոլութունը. մարդկության շահը պահանջում է, վոր ընկնի, վոչնչանա այն, վորի ներկայացուցիչն եք դուք: Յեւ մարդկության շահը հաղթելու յե ձեր մասնավոր շահերին. ձեր հաղթանակները միայն արագացնում են ձեր անկումը: Ձեր հաղթութեաններին առթիվ կատարած տոնի զանգերի հնչյունների մեջ՝ մենք ձեր մեծութեան հուղարկավորական քայլերգն ենք լսում:

Հակառակորդները զարմանքի սրտամաշ զգացումով նայում եյին այդ տեսարանին, լսում եյին նոր աշխարհի՝ իրենց համար ոտար՝ լեզուն, թեև այդնոր աշխարհը մի աննշան փոքրամասնութուն էր, վորը բողոք էր բարձրացրել հանուն մարդկության: Սակայն ամեն մի ճշմարտութուն, վոր ձգտում է տիրող լինելու, գտնվում է փոքրամասնության մեջ, միայն հաղթանակող ճշմարտութունն է մեծամասնության մեջ: Իհարկե, այդ փոքրամասնութունը համարյա բացառապես բանվորներից էր բաղկացած, վորոնք ներկա հասարակության մեջ ժառանգութունից զրկվածներն են—բայց միթե ուրիշ կերպ ել հասկանալի կլիներ: 2^ե վոր ճեզվածներն են միայն, վոր միշտ պահում պահպանում են ազատության յեւ մարդասիրության կրակը—բոցը, բանի վոր կարիքն է, վոր միշտ ել գեր-

կայանում և մարդկության ամենալավ յեւ ցուցիւն
միակ ուսուցիչը: Թույլին նա սովորեցնում և ազո-
թել, իսկ ուժեղին՝ ոգտվել իր ուժերից, մտածել իր
ազատութեան մասին և գործել հոգուտ իր ազատու-
թեան: Ներկայումս բանվորները կարիքից մղված՝
նվիրել են իրենց ազատագրութեան (эмансипация)
գործին, — ինչպես միջին դարերում գյուղացիները հայ-
տարարեցին ազատութեան և հալածարութեան ա-
վետարանը, ինչպես մեր ժամանակաշրջանի (эра)
սկզբներում խեղճերի և թշվառների մեջ առաջ յեկավ
քրիստոնեյական վարդապետութիւնը:

Առաջին անգամը չե, վոր յերկու աշխարհ կանդ-
նած են այդպես դեմ առ դեմ: Անցյալ դարում, յերբ
բուրժուազիան դեռ քաղաքականապես ստրկացած
— ճնշված էր, ստեղծեց իր մտքերի և հայացքների
առանձին — սեփական աշխարհը, վորը խիստ կերպով հա-
կասում էր տիրող — իշխող աշխարհին, վորին վերջ ի
վերջո մտավորապես նվաճեց բուրժուազիան. սա մի
«բարոյական հաղթանակ էր», վորին ֆրանսիական
հեղափոխութեան ժամանակ պետք և հետեւեր նյութա-
կան հաղթանակը:

Բայց պատմութիւնն ավելի հարմար համեմա-
տութիւն և տալիս մեզ. հին հռոմեական աշխարհն
իր գորութեան զազաթնակետին եր հասել. ել տիրե-
լու բան չունեւ, քանի վոր յերկրիս բոլոր պետու-
թիւններն ել պարտավոր էին նրան հարկ վճարել:
Հարուստները մինչև կոկորդները խրված էին անլուր
շապլութեան մեջ, մասսաներն ել հեծում էին բթա-
ցնող ստրկութեան լծի տակ: Հենց այդ ժամանակ, այդ
ճորտացած, ստորացած ամբոխի խիղճը սկսում և հուզ-

վել-ալիկոծվել ընդդեմ այդպիսի խայտառակ պայման-
ների, և առաջանում և մի շարժում, վորն սկզբում իշ-
խողների և հարուստների մեջ ծաղր և խրամարհանք
և առաջ բերում, բայց հետո աստիճանաբար յերկուդ
ներշնչում նրանց, յերկուդ, վորը վերջ ի վերջո դըր-
դում և նրանց ամենախիստ և ամենասարսափելի հալա-
ծանք սկսել նոր վարդապետութեան հետեւողների դեմ:
Բայց այդ հալածանքներն ստեղծում են միայն նահա-
տակներ և ել ավելի ամրացնում այն գաղափարը, վո-
րը ձգտում է յին վոչնչացնել: Նրանց, — յերկուդ ա-
ռաջ բերողներին, — «հասարակութեան և պետութեան
թշնամիներին» (դրանք քրիստոնյաներն էին). արգե-
լում են միասին հալաքվել — նրանք ել հալաքվում են
կատակոմրներում (ստորերկրյա գերեզմանատներ):
Նրանց համար գտնում են ամենակատարելագործած չար-
չարանքներ. մահը շրջապատվում և սարսափի հազա-
րավոր առարկաներով. ի դուր մահը չի ներկայանում
վորպես խայթոց այդ հալածողների համար. և ամենա-
նոր հնարած չարչարանքներն անգամ նրանց մեջ ա-
ռաջ են բերում միայն կարեկցութեան ժպիտ դեպ այն
հիմարները, վորոնք յերեւակայում են, թե այդ միջոց-
ներով կարող են սպանել գաղափարը: «Յեթե մեր գոր-
ծը ասածուց և, դուք չեք կարող վոչնչացնել — խեղ-
դել այդ, իսկ յեթե ասածուց չե, ինքն իրեն կոչնչա-
նա՝ առանց ձեզ ել»: Այս խոսքերով զիմելով իրենց
դահիճներին՝ գնում էին նրանք ուրախ-ուրախ դեպի
պատժավայր՝ հալատացած, վոր պիտի հաղթեն: «Յե-
թե մեր գործն ասածուց և» — այսինքն ժամանակակից
լեզվով՝ յեթե մեր ձգտումը համապատասխանում և
մարդկութեան մտավոր, բարոյական և նյութական շա-

հերին, — վոչ մի ուժ չի կարող արմատախիլ անել. իսկ յիթե նա «աստծուց չե», այսինքն՝ յիթե նա հակասում է այդ շահերին, այն ժամանակ պետք է վոչնչանա հենց այդ հակասության մեջ՝ առանց բռնի ուժի, առանց բռնի միջոցների, վորոնք ծայրահեղ դեպքում կհերքեն նախ միայն մեռնող գաղափարին կյանքի մի վերջին նշույլ եւս:

Յեւ ի՞նչ, առյուծներ, ոճեր, խաչեր, խարույկներ — և ի՞նչ յեղով դրանց ներգործությունը: Մարդկային խղճի հեղափոխությունն անդադար առաջ էր գնում. քրիստոնեությունը հաղթեց ամենակարող կռապաշտությունը, նոր աշխարհը խորտակեց-վոչնչացրեց հին աշխարհը: Մի նկատողություն. յես հեռու յեմ հավատալու այսպես կոչված «սկզբնական քրիստոնեություն» սովորական ավանդություններին, ավելի հեռու յեմ ժամանակակից քաղաքակրթությունը քրիստոնեություն հետևանք համարելուց: Վերջին հայացքը դրականապես սխալ է և նույնիսկ բացարձակապես հակասում է ճշմարտության. հեշտությամբ կարելի չէ ապացուցել, վոր սկսած այն ժամանակից, յերբ քրիստոնեությունը պետական կրոն դարձավ, ամեն մի մտավոր և նյութական գյուտ կարելի չէր անել միայն կովկոմ քրիստոնեության դեմ, **հակառակ** քրիստոնեություն: Մեզ հասած հին և նոր ժամանակների առասպելները հեքյաթների շրջանին են պատկանում. և չի կարելի բացասել, վոր գիտությունը և գեղարվեստը, վոր, ըստ նոր վարդապետության (քրիստոնեություն) հետևողների, անանջատ էյին համարվում կռապաշտությունից, ոտար — անձանոթ էյին նրանց և ամենախիստ հարձակման յենթարկվեցին դրանց կող-

մից: Ինչ վերաբերում է այն ժամանակաշրջանին, յերբ քրիստոնեությունը հալածանքի փշյա պսակն էր կրում, հիմարություն կլիներ, վորի մեջ, ճիշտ է, այժմ մեզ մեղադրում են, յիթե մենք բացասեյնք, վոր քրիստոնեական շարժումն անհրաժեշտաբար ծնունդ առավ և զարգացավ այն ժամանակվա պայմաններից, և վոր այդ բարոյականության բողոքը, վորն ապրում է մարդկային հավասարության զգացման մեջ, հարկավոր էր, վորպեսզի շեշտակի կերպով խորտակեր փթած, ստրկության վրա հիմնած կռապաշտական հասարակությունը և դրանով ճանապարհ բաց աներ մարդկությանը ապագա առաջադիմության համար: Իհարկէ, դասական (классический) կռապաշտության անկմանը հետևեց մի յերկար ու մութ գիշեր: Քրիստոնեությունը պետական կրոն դառնալով՝ շեղվեց այն սկզբունքներից, վորոնց պարտական էր նա իր հաղթությամբ, և դարձավ ճնշման գործիք: Բայց մարդկությունը կանգ չառավ իր շարժման մեջ: Հավասարության, ազատության և յեղբայրության գաղափարները շարունակեցին աճել հասարակական պայմանների խորքում: Իզուր էր պետական յեկեղեցին աշխատում շղթաներով կապկպել այդ ձգտումը, իզուր էր նա հավատաքնություն (инквизиция) դատարաններ *) կազմում: Նա կարող էր այրել միմիայն ժարմինը, բայց հավիտենական մտքերը ֆենիկսի նման բարձրանում էյին մոխրի միջից անփնաս թևե-

*) Միջին դարերում կաթոլիկ յեկեղեցին զաղտնի հողերը դատարաններ էր հիմնում, վորով կաթոլիկ յեկեղեցու դոգմաները չընդունողներին կամ այդ դոգմաներից շեղվածներին վորոնում էյին և ամենաապրտափելի պատիժների յենթարկում:

րով: Հերետիկոսները հարյուր հազարներով զոհ ելին դնում, «անսխալականության» դահիճները տոնում ելին ամենափայլուն «հաղթանակներ ու հաջողություններ» — միայն վայրկենական: Վերջնական հետևանքն այն յեղավ, վոր ելի հերետիկոսները հաղթեցին հերետիկոսների դատավորներին: Ռեֆորմացիան վոչնչացրեց տապականության զորությունը, և ներկայումս անսահմանափակ — ազատ պապը ապավինած և իր օթնամիկների գթասրտության և ներկայացնում և կարեկցության արժանի մի առարկա, բայց վոչ յերեք վախի:

Յեւ խկապես, ով ընդունակ և սովորել ընդհանրապես, պետք և հասկացած լինի կրոնական հալածանքների պատմությունից, վոր անմտություն և ձգտել յետ շրջելու առաջադիմության անիվը: Ինչպես վոր միջին դարերում հերետիկոսների դատավորները նոյովի արժանացան մարդկության դատարանի միջոցով, այնպես և ներկայիս հերետիկոսների դատավորները, վորոնք համարձակվում են ճնշել սոցիալիզմի նոր վարդապետությունը վոտեկանական նոր հալածանքներով, նոյոված կլինին մարդկության դատարանի առաջ: Յեւ ինչպես վոր միջին դարերի հերետիկոսները վերջի վերջո հաղթեցին հերետիկոսների դատավորներին, այդպես և ներկայիս հերետիկոսները կհաղթեն ներկայիս հերետիկոսների դատավորներին: Կամ չլինի մտածում են, թե մեր գաղափարների մեջ տվելի քիչ կենսական ուժ կա, քան քրիստոնեական նախատեղիների գաղափարների մեջ: Սխալ յենթադրություն:

Այն դերն, ինչ վոր խաղացել և քրիստոնեյու-

թյունը հին հոռեյական աշխարհի անկման նկատմամբ, նույն այդ դերը խաղում և այժմ սոցիալիզմը բուժուական աշխարհի նկատմամբ: Ինչպես այն ժամանակ, այնպես և այժմ խղճի զգացումը դեմ և յենում կոպիտ նյութապաշտության*), վորը զուրկ և վորեւ իղեալից և ստորացնում և մարդուն — հասցնում նրան անասունի և ապրանքի աստիճանի. այն ժամանակվա նման ելի միայն խեղճերի ու ժառանգությունից զրկվածների մեջ և աճում նոր աշխարհի սերմը. ինչպես այն ժամանակ, այնպես և այժմ մեզանում առաջ յեկավ զժողովուն ազգային նախապաշարունակների հետ: Այնուամենայնիվ կա մի ելական տարբերություն. սոցիալիզմին դեմ չե և վոչ մի գիտություն. ընդհակառակը, նա ամուր կերպով հենվում և գիտության վրա, թեև գիտության իմաստունները մեծ մասամբ ծառայում են մամոնային. սոցիալիզմը վոչ միայն զգացմունքի գործ և, այլև խելքի գործ. նա հիմնվում և զոյություն ունեցող հասարակական հարաբերությունների պարզ-վորոշ գիտակցության վրա և ունի համայնքի ու պետության վերաշինության վորոշ և իրականացնող ծրագիր, կամ ավելի պարզ՝ համայնքի, քանի վոր պետությունը վոչ այլ ինչ և, յեթե վոչ (շատ կամ քիչ լավ) կազմակերպված համայնք: Վորպես զգացմունքի և խղճի գործ՝ սոցիալիզմն իր մեջ կրում և քրիստոնեյության ամբողջ ուժը — ուշադրություն դարձրեք, յես այստեղ խոսում եմ քրիստոնեյության զարգացման առաջին շրջանի շարժման մա-

*) Այս նյութապաշտությունը պետք և զանազանի գիտական նյութապաշտությունից (материализм), վորը յես, իհարկե, չեմ բացատրում:

սին.—Վորպես խելքի դործ՝ սոցիալիզմը կրում է իր մեջ գիտության ամբողջ ուժը: Բայց յեթե միայն զգացմունքն առաջին քրիստոնյաներին անհաղթելի դարձրեց, ուրեմն վերջան անհուսալի յե այդ դեպքում սոցիալիզմի դեմ մղած կռիվը, սոցիալիզմի, վորին զգացմունքը կրոնի ուժ է տալիս, իսկ խելքը՝ գիտության ուժ:

Յեթե միայն ուղիղ հասկանանք «կրոն» բառը, այն ժամանակ յես կասելի, սոցիալիզմը միջկրոնական ժամառակ չէ՛վ կրոն է, չէ՛վ գիտություն: Սոցիալիզմը չի կարելի վոնչացնել վոչ խորամանկությամբ, վոչ ուժով, վոչ սոփեստական, կեղծ ու պատրի ապացույցներով, վոչ վոստիկանության միջոցով և վոչ ել հրացանով, վորովհետեւ նա արմատ է բռնել, բուն և զրել բանվորների սրտերի մէջ: Ամեն մի բանվորի մեջ գիտակցարար, թե անգիտակցարար, շատ թե քիչ զարգացած և սոցիալիզմի սաղմը և այդ սաղմը—նոր աշխարհի սաղմը—անկարելի յե խելղել: Յեվ վոչ մի բան չի կարող այդ գործին ոգնել, կարելի յե ստել, փակել աչքերը, ամբաստանել, կոտորել—բոլորն իզուր, շարժումն առաջ և դնում բնական որոնքի անհրաժեշտությամբ, իսկ հալածանքները միմիայն ամբացնում են սոցիալիզմը, ինչպես ամբարըին քրիստոնեյությունը: Բանվորներն ել կարողանում են մեռնել իրենց համոզմունքների համար, ինչպես մեռնում էյին քրիստոնյաները: Սոցիալիզմն ել քրիստոնեյության նման ունի իր նահատակները, և յեթե ելի սպանվին տասնյակ—հարյուր հազարներ, այնուամենայնիւ այդ չի խանգարի սոցիալիզմին վերջ ի վերջո հաղթանակ տանելու, ինչպես և չխանգարեց քրիստոնեյությանը:

Յուրաքանչյուր նահատակի արյունից կծլին հարյուրավոր նոր նահատակներ. ուժեղացրած վտանգը կամբայնդե քաջության—անվեհերության զգացմունքը և, Ֆրանսիական հեղափոխության մի արտահայտության համաձայն, «Ով դաշն է կապել մահվան հետ, հաղթությունն ել նրա կողմը կլինի»: «Արյունը և յերկաթը» թող սարսեցնեն վախկոտներին. իսկ մենք ծածաղել կարող ենք միայն սպառնալիքների և վտանգների վրա:

Նայենք Ֆրանսիային—այդ ահագին և՛ քաղաքական, և՛ սոցիալական փորձառու դաշտին, վորտեղ շատ ժամանակ չե անցել, ինչ խաղացվեց Կոմմունայի այդ վսեմագույն վողբերգությունը: Սոցիալիստական պրոլետարիատը, վոր Պարիզի անցքերի ազմկահույզ ալիքների վրայով քաղաքական իշխանության բարձրության ել հասել, կորավ պրուսական և Ֆրանսիական զորքերի միացյալ ուժի ճնշման տակ. քառասուն հազար բանվորներ սպանվեցին կուլի ժամանակ և կուլից հետո. նույն այդ չափով ել բանտարկվեցին, վորպեսզի վատառողջ բանտերում, նավերի նեխած պատերի մեջ, շիկացած ավազոտ անապատներում և Նոր-Կալեդոնիայի թունավոր ճահիճներում զոհվին «չոր գիլիոտինին»: Վերպիսի հրճվանք հին աշխարհի ներկայացուցիչների համար: Սոցիալական հարցն այրվեց, չքվեց աշխարհից, սոցիալիզմը հանձին 80,000 սոցիալիստների՝ մահվան յենթարկվեց, սպանվեց:

Սոցիալիզմն սպանվեց. այդ պարոնները վատ հիշողություն ունին. այդ ահուկի դեպքից (катастрофа) քսանյերեք տարի առաջ Պարիզը ներկայացնում եր նույնպիսի վողբերգության մի հրապարակ, վոչ այս-

պիսի մեծ չափով, բայց և վոչ պակաս վսեմ: Ֆրանսիական փեսովարյան հեղափոխությունը հայտնի չէ ձեզ ընդհանուր գծերով: Պարիզյան պրոլետարիատը վայր գլորեց հունիսյան գահը: Նա լուրջ համարեց ազատամիտ բուրժուազիայի այն հուզումից առաջացած ֆրադաները, վորով նրանք բուրժուական թագավորությունը լիջացած եյին հայտարարում, և չարիքի հենց արմատին խփեց: Բայց հեղափոխությունը նրա համար լոկ ֆրազա չէր. նա չեր ուզում վոչնչացնել մի ձևի շահագործությունը և քաղցածությունը, վորպեսզի մի ուրիշ ձևի տակ նորից նրանց գահ բարձացնեն:

Հաստատվեց ժամանակավոր կառավարություն, վորը բաղկացած էր «կարգին—խելքը գլխին» հանրապետականներից և սոցիալիզմի միքանի ներկայացուցիչներից: Բանվորները, վոր ավելի դուրահավատ և մեծահոգի էյին, քան խելոք, հայտարարեցին կառավարությունը. «Մենք գիտենք, վոր մեծամասնությունը ձեզնից չի համակրում մեր ձգտումներին. բայց մենք, վորքան կարելի չէ, ցանկանում ենք խոստովել ապագա արյունահեղությունից: Մենք համաձայն ենք յեւեւ ամբս քովառություն կրել. յերեք ամիս մենք կտանենք զրկանքներ. այդ յերեք ամիսը մենք տալիս ենք ձեզ վորձի համար: Յեթի այդ ժամանակամիջոցն անցնելուց հետո տեսանք, վոր ազնիվ էք, վոր ուզում էք մի բան անել քաղցած պրոլետարիատի համար, լսվ, սոցիալական հարցն այդ դեպքում խաղաղ ճանապարհով լուծումն կստանա: Բայց յեթի տեսնենք, վոր մենք նորից խաբված ենք, այն ժամանակ արդեն մենք ինքներս պետք է մեզ ոգնենք»: Կառավարությունն ամեն ինչ խոստացավ և ամեն բա-

նում ել խարեց: Ազգային արհեստանոցները, վորոնց մեր անհայտ մամուլը սոցիալիզմի ստեղծագործություն եր համարում, կազմվեցին այն նպատակով, վոր կարողանան մի բանվորական բանակ առաջ բերել սոցիալիզմի գեմ. սա մի վորձ էր, վոր ջախջախեց ընդհարվելով ֆրանսիացի բանվորի կենդանի վառ դասակարգային գիտակցություն հետ: Պրոլետարիատին կարելի չեղավ քթից բռնած քաշ տալ, խաբել: հարկ համարվեց բնաջինջ անել նրան գնդակաձիգներով (картечь):

Ձեռք առնվեցին անհրաժեշտ միջոցներ. և յերբ բուրժուազիան (վոր իշխում էր ժամանակավոր կառավարություն մեջ ազգային ժողովում) հավատացած էր, վոր հաղթանակը տարել է, դուրս ձգեց ազգային արհեստանոցներից զեպի փողոց 30,000 բանվոր և ստիպեց նրանց մովամահ լինել, կամ կովել: Ճիշտ այդ ժամանակ լրացավ «սովի պայմանագրի» ժամանակը, վոր կապված էր մարտի 18-ին: Հունիսի 21-ին և 22-ին պրոլետարիատը կովի պատրաստություն տեսավ, հետևյալ որն ել կռիվը բռնկվեց: Իմ խնդրի մեջ չեմ տեսնում բանալ ձեր տուաջ հուլիսյան ապստամբության մանրամասնությունց պատկերը: Բավական է հիշել, վոր չորս ուղվան հերոսական կովից հետո 40,000 բանվոր չորս ուղվան հերոսական կովից հետո 40,000 բանվոր ընկան զորքի հարվածների տակ, զորքի, վորը բաղկացած էր 80,000 կանոնավոր զինվորներից և 40,000 ազգային ընտիր զորքից—գվարդիայից ու մորիլից*): Ամենասարսափելի խոտուխություններ կատարե-

* Չֆրանսիայի ազգային չարժական գվարդիան, վորը 1868 թ. որների հիման վրա բաղկացած էր այն բոլոր 20—40 տարեկան տղամարդկանցից, վորոնք ընդունակ էյին զենք կրելու, բայց զորքի կազմի մեջ չէյին մտած:

ցին հաղթողները.—հաղարհերով գերիներ սպանվեցին. կռվում ընկած և հետո սպանված բանվորների թիվը մոտ 12,000 են հաշվում, և համարյա այդքան էլ գերիներ, վրոնց վախեցան միանգամից սպանել, ուստի ուղարկեցին Լաբեստա և Կայեննա, ուր մեծամասնությամբ զոհ գնաց կլիմային և հաղթողների սոսկալի վերաբերմունքին:

Անասկի հրճվանքը շմեցրեց բուրժուազիային հունիսյան մարտիկների պարտության առթիվ. սոցիալիզմը վոչնչացրած էր. «հասարակության ազատված». զրա հետ միասին ազատված էին նաև այն բուրժուազները, ինչ վոր նրա—հասարակության հետ կապ ուներ. ազատված էր «ընտանիքը», «սեփականությունը» և աստված գիտե, թե էլ վո՞րքան գեղեցիկ բաներ, վրոնց աստվածացնում է բուրժուազիան խոսքերով, իսկ իրոք վոտի տակ տալիս և պղծում:

Սոցիալիզմն սպանված էր: Տասներկու հազար «ավազակներ», «մարդասպաններ — հրդեհաձիգներ», «ժամանակակից բարբարոսներ»—յես չեմ կարող թվել այն բոլոր հայհոյանքները, վոր գործ էին ածվում այն ժամանակ. կարդացեք մեր մամուլի ֆրանսիական Կոմունայի վերաբերյալ հոգվածները և կգտնեք հայհոյանքների ամբողջ շարքը. բուրժուազիայի լրագրական ծառաները չէին դժվարանում նոր հայհոյանքներ ստեղծել—տասներկու հազար սոցիալիստներ սպանված, տասներկու հազար էլ «չոր գիլիոտինի» ճանապարհին էին— էլ ո՞վ կարող էր այն ժամանակ վորեք վտանգ սպասել ապագայում: Սոցիալիզմը մեռել և թաղվել էր. նրա գիտնականները կերպով—խորը հողի մեջ էին թաղել. կարող էր արդյոք սո-

ցիալիզմը նորից հարություն առնել: Ժամանակն առաջ էր գնում. հանրապետությունն էլ պետք է շուտով գերեզման իջներ և պառկեր սոցիալիզմի կողքին: Յեւ Նապոլիոնն այդ գերեզմանի վրա բարձրացրեց իր դահլ. կարող էր նորից հարություն առնել մեռած սոցիալիզմը: Իշխում էին «արյունը և յերկաթը». մամուլը ստրկացրած էր և կամ կաշառված. ամեն ինչ գործ էր զրվում միայն այն նպատակով, վոր բանվորներին կայսրության կողմը թեքեյին. մասսայի զգացմունքները թունավորվում էր. կազմակերպվեց գաղտմունքները թունավորվում էր. կազմակերպվեց գաղտնի և հայտնի վոստրիկանություն չտեսնված-չլսված չափով և դարձավ պետական բարձրագույն հիմնարկություն: Զորքը դարձավ, ինչպես այժմ—ժամանակակից պետության մեջ ունեցած նրա իսկական նշանակությունն է, Պրեստրիանների զվարդիա*), վրոնց վարժեցրել էին ժողովրդի զեմ, ինչպես բուլղոգին (շուն) վարժեցնում են մարդու վրա հարձակվելու. մի խոսքով հետադիմական (реакционный) պետության արհեստի բոլոր միջոցները գործ էին զրվում, վոր նոր բռնկման առաջն առնեն: Բռնապարտի արածից ավելին վոչ մի կառավարություն չէր կարող անել. և յես չեմ կարծում, վոր կըլինի մի յերկրորդ կառավարություն, վոր կարողանա Բռնապարտի արածի չափ անել: Այն, ինչ վոր այժմ անում են այդ ուղղությամբ Բիսմարկն ու Շտիրները, միայն նմանություն է կայսրությանը. դարմանալի չէ, վոր Բռնապարտը բուրժուազիայի կուռքը դարձավ, այն էլ վոչ միայն ֆրանսիական բուրժուազիայի, վոչ, այլ ամբողջ յերկրների, առանձնապես գերմանական բուրժուազիա-

*) Հոմոսյական կայսրների թիկնապահ գործ:

յի: Յուրաքանչյուրը ձեզնից, բարեկամներս, հիշում ե, թե ինչպես մի քանի տարի առաջ մեր ազատամիտ մամուլը՝ կլադերադաչը— ժողովրդական թերթը, Ազգային թերթը— ե վորքան ավելի ազատամիտ, այնքան ավելի ջերմեռանդ— բյուզանդական յեղանակով խոնարհվում եյին դեկտեմբերի 2-ի մարդի առաջ: **Նա**— այդ մարդը յերևաց վորպես նախախնամութիւն մարդկային պատկերի մեջ՝ ամեն լմաստութեան և ամենակարողութեան աստվածային հատկանիշներով: Յեւ ինչո՞վ վերջացավ այս բոլորը:

Քսանյերկու տարի հսկան, վոր մեռած եր համարվում, պատկել եր հողի տակ. բայց ահա նա սկսեց ուղղել իր անդամները և 1870 թ. սեպտեմբերի 4-ին կանգնեց և դուրս յեկավ իր գերեզմանից— **Քոնապարսի** գահն ընկավ յեւ սոցիալիզմը հարուստ առավ:

Կես տարի անցնելուց հետո՝ կազմվեց Փարիզյան կոմմունան: Սոցիալիզմը, վոր 1848 թ. միայն չորս ուր կարողացավ կռիւի դիմանալ, այս անգամ յերկու ամսից ավելի ընդմիջեց Ֆրանսիական զինվորապետական կարգերի միացյալ ուժերին, վորին աջակցում եյին պրուսիացիները. և նրան— սոցիալիզմին հաղթել կարողացան միայն ութնորդա փողոցային կռիւից հետո: Կոտորած ավելի յեղավ այս անգամ, քան 1848 թ. և աքսորականների թիւը ել կրկնապատկեց: Ֆրանսիական բուրժուազիան վճեց այս անգամ հիմնավոր կերպով մաքրել և մշուս մնացած պետութիւնների բուրժուազիան ել հիացմամբ ծափահարեց նրան— **Ֆրանսիական բուրժուազիային:**

Բայց այժմ, յերբ չորս ամիս հաղիվ լինի անցած, բուրժուազիան սկսում և գիտակցել, վոր իր

հաղթութիւնը— Պիրրոսի հաղթութիւնն և, վոր ինքը զանակով խփել ե իր սեփական մարմնին: Նա այնպես մաքրեց, վոր իր արհեստանոցներն ու գործարանները զուրկ մնացին հարկավոր թվով բանվորներից: Սակայն սոցիալիզմն սպանված չե. նա ապրում ե փարիզում, Ֆրանսիայում, Գերմանիայում և բոլոր քաղաքակիրթ յերկրներում. նա ապրում և յուրաքանչյուր բանվորի կրծքում, վորի սիրտն ընդունակ և զգալու, գլուխը՝ մտածելու: Չե՞ վոր չի կարող բուրժուազիան սպանել բոլոր բանվորներին. և նույնիսկ յեթե այս բանը նրան հաջողվի, ինչ հետեանքի կը հասնի: **Նա** գրանով ինքնասպանութիւն գործած կը լինի: Բուրժուազիան գոյութիւն ունի շնորհիւ բանվորների. առանց բանվորների նա կը դադարի գոյութիւն ունենալուց և բանվորների միջոցով ել կը կորչի— նա չի կարող այս անողոր զիլեմմայից (առեղծված) դուրս գալ: Բուրժուազիայի զարգացումը պահանջում և պրոլետարիատի աճող բազմութիւն. բայց տնտեսական հարաբերութիւնները ձգում են պրոլետարիատին սոցիալիզմի զիրկը: Վորքան ընդարձակվում և բուրժուազիայի իշխանութիւնը, այնքան ավելի են աճում պրոլետարիատի խմբերը, այնքան ավելի ուժեղանում սոցիալիստական շարժումը, այնքան ավելի զորեղանում բուրժուազիայի **հակառակորդները:** Յեթե բուրժուազիան ցանկանում և բուրժուազիա ել մնալ, պետք և ամբացնի պրոլետարիատին նրա հետ միասին ել սոցիալիզմը, վորը և նրան— բուրժուազիային պետք և վոչնչացնի: Յեթե նա կովում և պրոլետարիատի և սոցիալիզմի դեմ, ուրեմն զրանով խորտակում և իր սեփական իշխանութեան հիմքը, իր

գոյության հիմքը: Այս «կախարդված շրջանի» մեջ նա պետք է վոչնչանա: «Արյունը և յերկաթը» անկարող են սոցիալիստական շարժման հոգին հանել: 1848 թ. հունիս ամսում մի անհաջող փորձ կատարվեց. և 1871 թ. Փարիզյան արյունոտ ազատությունը մեծ հաջողություն չունեցավ: Ինչպես հունիսյան ապստամբությունը տոնեց իր հարությունը կոմունայով, այդպես էլ ինքը կոմունան ապագայում պետք է տոնե իր հարությունը, ավելի մեծ ուժով կըկրկնվեն բռնկումները, մինչև վոր հին աշխարհը վերջացնի իր բոլոր փրկարար միջոցները և խորտակվի.—կամ կառելի յե այդ բոլորը վերջանա իսպաղ ճանապարհով: Կոպիտ ուժն անկարող է խեղդել սոցիալիզմը: Ով տողորված է իր իրավունքի գիտակցությամբ, նա յերկյուղ չունի: Թող մեզ բանտարկեն, թող սպանեն մեզ—մեր գործը դրանից չի փլասով: Այն անհաղթելի հոգին, վորն ոգնեց հին քրիստոնիաներին ժպիտով տանել նահատակություն, վոգեորում է և սոցիալ-դեմոկրատներին: Մենք առաջ ենք գնում այն ճանապարհով, վորով ստիպում է մեզ գնալ մեր համոզմունքը. և յեթե նույն իսկ այդ ճանապարհը ծածկի դիակներով, մենք առաջ կշարժվենք գրոհ տվող դորասյունների նման, վորի շարքերը նվազում են թշնամիների գնդակներից—հառաջ, մինչև հասնենք նպատակներին:

Միայն ուժի միջոցով վոչինչ չեն կարող անել սոցիալ-դեմոկրատիային. այս բանը լավ են իմանում և մեր թշնամիները. նրանք ուզում են հաղթել «մոտավոր» հրացանով: Նրանք ստեղծում են բանվորական միություններ, ուր ներշնչում են բանվորին, թե կապիլի և աշխատանքի մեջ կատարյալ «ներդաշնակութուն»:

կա. բանվորի իսկական շահն է, վոր նա աշխատանք տվողի հետ ձեռք ձեռքի տված առաջ գնա. և վոր սոցիալական հարցի կռվախնձոր ձգողն այդ յերկու դասակարգերի մեջ փառասեր, անբարեխիղճ և կամ ավելի պարզ՝ խելացնոր մարդկանց մի խմբակ է:

Թող մեր հակառակորդները շարունակեն հիմնել բանվորական միություններ. նրանք հիմնում են այդ մեզ համար: Ներդաշնակության ուսման ամբողջ կեղծիքը բավական զգալի կերպով ապացուցում է բանվորին ամենուրյա փորձը. և յեթե բանվորը բուրժուական մամուլի ազդեցության տակ առանձնապես դեմ է կանգնած սոցիալ-դեմոկրատիային, պարզ ասեմ, նա շուտով դասակարգային հակասության հոտը կառնի և նրա ամբողջ եյությունը կըզրավի սոցիալական կրոնիզմ և փորձը կսովորեցնի նրան հասկանալ, վոր ներկա կապիտալիստական արդյունաբերության շրջանում բանվորի և աշխատանք տվողի շահերն ուղիղ հակասակաճ են միմյանց. հերիք է միայն ցույց տալ, վոր բանվորի շահը կայանում է նրանում, վոր վորքան կարելի յե ավելի շատ աշխատավարձ պահանջի, աշխատանք տվողի շահը նրանում՝ վոր ձգտի վորքան կարելի յե իջեցնի այդ աշխատավարձը: Այդ յերկու դասակարգերի միայն հենց այս անհամաձայնության մեջ, էլ չեմ խոսում ընդհանրապես քաղաքական և սոցիալական գրության մասին, արդեն գտնվում է անվերջ ու անդադար ընդհարումների և վեճերի աղբյուրը, մի խոսքով **դասակարգային կռիվը** շատ կամ քիչ սուր ձևով: Յեվ այսպես վերջին ժամանակներում էլ մենք պետք է տանելինք պատմության տարրի-նակ ծաղրը, վորը կայանում է նրանում, վոր ամե-

նախիստ և ամենայնրկար գործագուցները, — իսկ գործագուցն՝ աշխինքն աշխատանքի դադարեցնելը փողոցային կովից հետո դասակարգային կովի ամենաուժեղ ձևն է, — վոր ամենամեծ և ամենահաստատ գործագուցները Գերմանիայում, Վալդենբուրգում, Ֆորստում և այլն, ծագեցին այն բանվորներից, վորոնք Գրեշ-Դուենկերի արհեստանոցներում ուսումնասիրել էին ներդաշնակութան իմաստը, բայց վորոնց համար այդ բարեպաշտ մտքի տեսական կաթիլ՝ շնորհիվ աշխատանք տվողների գործնական վերաբերմունքի՝ փոխվեց, այրող ոձի թույն դարձավ։ Այս դեպքում պետք է նկատել, վոր վերջին ժամանակներին ամենածայրահեղ «բանվորական եքսցեսսը» պրուսական պետական հանքերում, (Քենիգսբրուտում) տեղի ունեցավ, ուր չեր թափանցել սոցիալական թույնի և վոչ մի հյուլե։

Յեա կարծում եմ, վոր այս ել հերիք և պարզ կերպով նկատելու, թե վորքան անհեթեթ է հաստատելն, իրը թե սոցիալական շարժումն առանձին անհատների սարքած բան է։ Սակայն մի քիչ խորը նայենք այս հարցին։ Հակառակորդների ասելով՝ կնշանակի, վոր մի քանի մարդիկ են յեղել շարժման սկզբնապատճառները, այն շարժման, վորը միատեսակ կերպով բռնկվել է բոլոր քաղաքակիրթ յերկրներում և համարյա մի ամբողջ սերունդ է ինչ տնորինում է Յեվրոպայի վիճակը և առանց վորին, ի միջի այլոց, մենք չենք կարող յերկրորդ կայսրություն յերևակայել, և առանց վորի դարձյալ անմիտ կլինեն Բիսմարկի ամբողջ տեր ու տիրականություն գործը։ Վորքան վերավորանք կա այդ յենթադրություն մեջ բանվորների

համար։ Հարյուր հազարավոր, միլիոնավոր բանվորներ թույլ տվեցին, վոր նրանց գլխահան աներ մարդկանց մի խմբակ, վորի յետևից վազեյին, նրանք առանց յետ նայելու, ինչպես վոչխարների հոտը վազում է իրեն առաջընթաց վոչխարների յետևից։

Ո, դուք պարոն բուրժուաներ և պարոն հետադիմականներ (реакционер). յեթե բանվորները լինեյին այդպես վոչ ինքնուրույն ու անկախ, ինչպես դուք եք յենթադրում, կամ ցույց եք տալիս թե յենթադրում եք, նրանք արդեն թրպրտալիս կլինեյին ձեռնուկաններում։ չե՞ վոր դուք ամեն միջոց գործ եք դնում միմիայն նրանց լոռնելու. և դուք, ճիշտ վոր, հազար անգամ ավելի շատ միջոցներ ունիք բանվորների վրա բարոյական և նյութական ազդեցություն գործելու, քան սոցիալ-դեմոկրատները։ Բացի այդ, մեր կուսակցություն էյական նշանն է սկզբունքային կռիվ մղել վորեն հեղինակության հավասարու դեմ և վճռական կերպով բացասել ամեն մի անհատական առաջնորդություն։ Բայց ձեր այդ յենթադրությունը վոչ միայն վիրավորական է բանվորների համար, վոչ միայն ճիշտ չէ այս դեպքում, այլ նույնիսկ ինքն րոտ ինքյան կատարելապես վոչ գիտական. այդ յենթադրությունն արտահայտություն է մի հայացքի, վորը հիմնված է զարգացման պատմական բնթացքի (процесс), կատարյալ անտեղյակության վրա։

Յերեխան շնորհիվ իր վառ յերևակայության և անդարդացած խելքի, լցնում է աշխարհը իշխանազուաներով, հսկաներով ու կախարհներով։ Ամեն տեղ նա յենթադրում է ինչ վոր դերբնական անսովոր բաներ, նրան թվում է, թե ամեն տեղ ել իշխում են

գաղտնի ուժեր: Այդպիսի մանկական, կամ ավելի լավ
և ասենք, յերեխայական տեսակետ ունեն և նրանք,
վորոնք մարդկության պատմության վրա նայում են,
վորպես արդյունք մի քանի՝ ընդհանուր շարքից
դուրս աչքի ընկնող չար կամ բարի մարդկանց. և յուրա-
քանչյուր անցքի, յեղելության, շարժման մեջ յենթա-
դրում են այս կամ այն անհատի քմահաճույքը, ինք-
նակամությունը. և այդ անհատներին ամեն տեսակ
գերբնական հատկություններ են վերագրում, վորպես-
զի նրանք համապատասխան լինեն այն գերին, վորն
իրենք են նրանց վզին փաթաթում: Այս տեսակետով
և առաջնորդվել մեր նորագույն ժամանակի պատմա-
գրությունը. նա ներկայացնում էր, և դեռ, ցավելով
պետք է ասել, ներկայացնում և մեծամասնությանը,
վորոնց անմատչելի յեն գիտության նոր արտադրու-
թյունները, նշանավոր իշխանների, զորավարների և
ուրիշ հերոսների*) անունների մի յերկար շարք, խառ-
նելով դրա հետ պատերազմների, մահացու սարսափ-
ների, դավադրությունների պատմություններ, — մի
խոսքով ստոր տեսակի տպավորիչ (сенсационный)
վեպ, կիսով չափ ասպետների և ավազակների պատ-
մություն, կիսով չափ ևլ մանկական հեքիաթներ: Գի-
տական պատմությունը (պիտք է զանազանել, իհար-
կե, ուսումնականից), վորը վաղուց չէ ինչ առաջ է
յեկել, և վորի գլխավոր ներկայացուցիչն և անդլիա-
ցի Բոկլը, նայում և մարդկային զարգացման վրա
վորպես անհրաժեշտ հետևանք բնության և մարդու
հարաբերության: Նա, ինչպես ընդհանրապես գիտու-

*) Այս անունն այստեղ դրած եմ ածում բառի ընդարձակ նը-
շանակությամբ — Գարեյի ձևով:

թյունը, չի ընդունում վոչ քմահաճույք, այլ միայն
անհրաժեշտություն, վոչ կամայականություն, այլ
պիսպիսություն-փոփոխություն, վոչ գերբնականու-
թյուն և անսովոր բաներ, այլ միայն բնական և այն
բոլոր բաներն, ինչ վոր ընդհանուր որենքների հետե-
վանք է ներկայանում: Հնաձև կամ պատմական հե-
քիաթների գերբնական պատկերները վոչնչանում են
քննադատության առաջ, ինչպես վոր սարսափելի,
մութ տեսիլները չքանում են առավոտյան արեգակի
ճառագայթների առջև. հերոսների պաշտամունքը դուրս
և ձգվում սնոտիապաշտության տականքների մեջ, —
«մեծ մարգիկ» ստորանում, իսկ մարգկուրյունը
բարձրանում է:

Պատմության ընթացքը ներկայացնում է մար-
դու հավիտենական կռիվը բնության հետ, անընդհատ
գոյության կռիվ — կռիվ սկզբում բնությունից չհաղթ-
վելու համար և կռիվ հետո՝ նրան հաղթելու համար:
Այս հազարամյա կռիվի արդյունքն է մեր ժամանա-
կակից քաղաքակրթությունը:

Բարեկամներ, ձեզ բոլորիդ էլ անշուշտ հայտնի
յէ, վոր գիտությունը հերքել և աստվածաշնչի ստեղ-
ծագործության պատմությունը: Մարդն իբրև կատա-
րյալ դուրս չեկավ ստեղծողի ձեռքի տակից և հետո
աստիճանաբար այնքան ալլասերվեց, վոր աստված
հարկ համարեց «իր պատկերով ու նմանությամբ
ստեղծված» եյակներին կատարյալ կորստից ազատե-
լու համար՝ ուղարկել մարգարեներ, փրկիչներ և ու-
րիշ նման գերբնական եյակներ. բացի այդ ևլ մարդ-
կությունը միայն հինգ կամ վեց հազար տարի չէ,
վոր գոյություն ունի: Յերկրաբանական հետախուզու-

թյունները ճիշտ կերպով ցույց են տվել, վոր յերկիրը իր այդ կարծր դրությամբ (նյութի, վորից կազմված է յերկիրը, տարիքի մասին մենք վոչինչ ասել չենք կարող, վորովհետեւ նյութը վոչ սկիզբ ունի, վոչ էլ վերջ) միլիոնավոր տարիներ է, ինչ գոյություն ունի. իսկ մարդն այնպես, ինչպես այժմ ենք տեսնում, մոտավորապես նույն տեսքով, հազարավոր տարիներ է, ինչ գոյություն ունի:

Միլիարդ տարիներ առաջ գեոեա, մամոնտի (կենդանի) ժամանակ, մարդը հասել էր, վորքան կարող ենք դատել գտնված քարե գործիքների հիման վրա, այնպիսի քաղաքակրթության, վորը նրան կենդանուց մի քիչ բարձր է դասում և ստիպում է մեղ յենթադրել, վոր նրանից առաջ անհամար սերունդներ են աշխատել: Ներկա ժամանակի արագ ընթացքի հիման վրա չպետք է դատենք նախնական ժամանակի առաջադիմության (прогресс) մասին: Այժմս, յերբ մենք կանգնած ենք բոլոր նախորդ սերունդների ուսերի վրա և վայելում ենք նրանց ամբարած քաղաքակրթական աշխատանքը, առաջադիմության գործոնները (фактор) սաստիկ բարձրացել—առաջ են գնացել, այն ինչ սկզբնական ժամանակի ամենաաննշան առաջադիմությունը հազար տարիների գործ էր. և այս կարելի չէ յեզրակացնել այն հանգամանքից, վոր բավական միմյանցից հեռու ժամանակաշրջանների պատկանող բազմատեսակ գործիքները շատ քիչ զանազանություն ունեն:

Սկզբնական մարդն այն սիգաճեմ, հպարտությամբ դեպ յերկինք նայող եյակը չէ, վորի ճակատին ստեղծվածների տեր լինելու իրավունքն է գծա-

գրած, ինչպես վոր նրան նկարագրում է հին-կտակարանի առասպելը: Նրա ծննդաբանությունը վճռականապես դնում է նրան կենդանիների շարքը. ինչպես կենդանիներն, այնպես էլ մարդն անցել են զարգացման բոլոր շրջաններով, սկսած հասարակ խորշից-ըջիջից. բայց շնորհիվ բարեհաջող հանգամանքների, մարդուն հաջողվել է գերազանցել իր ցեղակիցներին: Թե վոքքան ահագին ժամանակամիջոց է անցել, մինչև վոր մարդը պատմական դարն է թեակոխել, կարելի չէ միայն գուշակել, բայց վոչ յերբեք հաշվել: Համենայն դեպս պատմական ժամանակաշրջանը մի աննշան ժամանակամիջոց է՝ համեմատած նախապատմականի, այսինքն այն խավար ժամանակաշրջանի հետ, յերբ մարդն ընդունակ չէր իր գոյության համար հուշարձան կանգնելու: Պատմական դարն սկսվում է ծաղկել այն վայրկյանից, յերբ մարդն ընդունակություն է ցույց տալիս **ընկերություններ**—**համայնքներ** հիմնելու: Քանի դեռ մարդն ապրում էր միայն ինքն իրեն համար, կամ շատ-շատ թափառական ցեղերի զարգացման էր հասած, ինչպես պատահում է նույնը բոլոր կենդանիների մեջ, վոչ մի պատմության մասին էլ խոսք լինել չէր կարող: Նրա պատմությունն սկսվում է այն վայրկյանից, յերբ նա գտնում է «**հասարակակաճ—բաղաճական կենդանի**» (**Zoon politikon**): **Առանձին** վերցրած՝ նա չէր կարող բարձրանալ կենդանուց. միայն հասարակության մեջ, իրեն հավասարների ընկերակցությամբ հաջողեցրեց հասնել այդ բանին: Միայն հասարակության շնորհիվ է մարդը մարդ դառնում: Ամբողջ առաջադիմությունը, ամբողջ քաղաքակրթությունը հասարակական գործ է. և

վորքան ընդարձակ և հասարակական շրջանն, այն-
քան ավելի արագընթաց և առաջադիմությունը, այն-
քան ավելի բեղմնավոր և քաղաքակարթությունը։
Սկսելով դատ-գատ անհատներից՝ ընդարձակվել—դառ-
նալ ցեղ, ազգ և վերջի վերջո՝ համաշխարհային քա-
ղաքացի—անավասիկ մարդկային զարգացման ըն-
թացքը։

Միայն հասարակության մեջ և նույնպես բարո-
յականության սաղմը։ Մարդը պետք և հասկանա, վոր
իրեն համար ավելի ոգտակար և ընկերանալ—միանալ
իր մերձավորների հետ, քան կուվել նրանց հետ՝ հե-
տևարար ապրել մշտական վտանգի և յերկյուղի մեջ։
Ամեն մի բարոյականության հիմնական կետը՝ արա-
քո մերձավորին այն, ինչ վոր ցանկանում ես, վոր
նա բեզ անն՝ արդյունք և այն կարիքի, վորը ծնել և
մարդկանց մեջ նրանց համեմատել շահերի գիտակցու-
թյունը։ Իհարկե այդ համեմատելությունը կարող եր
վերարերվել սկզբում մոտիկ մարդկանց շատնեղ շրջ-
նանի և ընդարձակվել և աստիճանաբար յերկար, ծա-
նրը փորձերի դպրոցում, մինչև վոր վերջապես այժմ
մենք հասել ենք այն բանին, վոր համեմատելության
վերջին արդեւքները պահվում են միայն նիդալների
ուժով։ Համամարդկային համեմատելության գաղափա-
րը քաղաքակրթության և բարոյականության ամե-
նարարձր գաղափարն և, և սոցիալիզմի խնդիրն ևլ
այն և, վոր կատարելապես իրականացնեն այդ։

Յեւլ այսպես քաղաքակրթությունը հասարակա-
կան գործ և։ Յերբ և իցե ապրած յուրաքանչյուր
մարդ պետք և գոյության կոխով մղած լինի. և այդ կրո-
վով նա ռժանդակել և մարդուն իշխող լինելու մյուս

կենդանիների և բնության վրա։ Յուրաքանչյուրն
առանձին իր բաժինն և ձգում քաղաքակրթության
ամբարած վաստակի գումարի մեջ։ Յեւլ «մեծ մարդիկ»,
վորոնց մասին պատմում և պատմական առասպելը, յե-
թե իրոք գոյություն են ունեցել, նույնպես ձգել են
իրենց բաժինը—քաջալերված հանգամանքներից, լայց
կարելի յե մի քիչ ավելի շատ, քան նրանց անհայտ
յեղբայրակիցները.—համենայն դեպս այդ բանին
նույնպես ոգնել և միմիայն հասարակութունը։ Մինչ-
դեռ պատմական առասպելը գնահատում և ժողովուրդ-
ները մի բանի մեծ մարդկանց անսովոր գործերով,
քննադատական պատմությունն, ընդհակառակը, այդ
այսպես անվանված մեծ մարդկանց ժողովուրդների
արդյունք և համարում։ Գիտությունը խնայել չգիտե
վոչ քաղաքական, վոչ ել կրոնական իդեալները։ Ինչ-
պես քրիստոնյաները յերբեմն վայր եյին դնում
կռապաշտական կուռքերը պատվանդանների վրայից
և ցույց տալիս զարհուրած ժողովրդին, վոր այն մեծ
աստվածը, վորից իրենք այդպես վախենում եյին,
վոչ այլ ինչ և, յեթե վոչ փթած փայտ, կամ քարերի
կույտ, այդպես ել գիտությունն և դեն շարտում մեծ
մարդկանց պատվանդանների վրայից և ցույց և տա-
լիս, վոր զրանց յերկրպագելով՝ ժողովուրդները յեր-
կրպագած են լինում իրենց սեփական յերևակայու-
թյանը (фантазия)։ Վերցնենք պատմական առասպելի
մեղ նկարագրած ամենազորեղին—Նադալեոնին, այն,
այդ Նադալեոնին։ Վճրպիսի առասպելներ ասես, վոր
կապված չեն նրա անվանը։ Ինչպիսի գերմարդկային
գործեր ասես, վոր չեն վերագրում նրան։ Թող այդ-
պես լինի—լայց պատմական քննադատությունը պո-

կեց նրա գլխից ճաճանչափայլ պսակը և իջեցրեց այդ գերբնական մարդուն հասարակ արկածախնդրի աստիճանի, վորը խորամանկ խաղացողի ճարպիկությամբ ոգուտ քաղեց հեղափոխական ակիքի յետ քաշվելուց— նահանջից, վորպեսզի բռնի այն շահավետ դերքը, վոր հանդամանքներն ստեղծեցին նրա համար: Նրա պատերազմական և որենադրական սխրագործությունները զուրկ են իրենց զոգուների փայլից և ապացուցած և, վոր բոլոր տապարեզներում ել իր փառքով պարտական և նա ֆրանսիական հեղափոխության ստեղծագործություններին—հետևապես վոչ առանձին մեծ մարդու, այլ մարդկանց մեծ ընկերակցությամբ *): Պատմության դատավճռի համաձայն և ուղիղ դատողության հիման վրա՝ մարդիկ չեն կարող ազատ լինել, քանի դեռ չեն ազատվել ամեն մի սնտուրապաշտությունից և առանձնապես անձի պաշտամունքից (վորը պաշտամունքներից ամենասարսափելին և, քանի վոր յերկրի վրայի կուռքերը մոտ են մեզ և այդ պատճառով ել ավելի յերկրադալի մեղ համար, քան այն կուռքերը, վորոնք յերկիրն են քշված): դիտակցելով այս ճշմարտությունը՝ փարիզյան կոմունան ջախջախեց Վանդոմյան սյունը. և մենք ել հուսով կարող ենք, վոր շուտով բոլոր այդ անասկ կուռքերը՝ մեռած թե կենդանի, մսից—վոսկրից կազմվածները, թե յերկաթից ու մարմարից՝ ջարդ ու փշուր պետք և լինին:

Գիտական պատմությունը զեմոկրատիայի ամենա իմնավոր ուսուցիչն և, քանի վոր նա հրապարակ

*) Կառավարչական, դինվսրական, նաև որենադրական ասպարեզներում նախալինան, ինչպես այժմ հաստատված և, զարգարել եք իրեն Ողջային ժողովի և Գանվենտի փետուրներով:

և հանում արիստոկրատիայի բոլոր պահանջներն իրենց վոչնչությամբ: Նա ոժանդակում է հերոսների և խեղկատակների չքանալուն և իրավունքը թողնում է մարդուն, թողնում է յուրաքանչյուրին: Մենք մեր քաղաքակրթությամբ սրարտական ենք վոչ թե մի քանի բնարյալների գերբնական ուժին. վոչ, մարդկությունը բարձրացել և խաղաղ Ովկիանոսի մարջանե (коралл) կղզիների նման, շնորհիվ անհամար սերունդների միլիոն ու միլիարդ անհատների խմբական աշխատանքի: Կամ ուրիշ որինակ բերենք. դուք բարեկամներ, իհարկե, լսած կլինիք ինֆուզորիաների*) գոյության մասին. զրանք այնքան վոքը են, վոր միայն խոշորացույցով կարելի կլինի տեսնել զրանց. բայց զրանք շնորհիվ խմբական աշխատանքի փոխել են յերկրի մակերևույթը. ձեզ նույնպես հայտնի կլինի, իհարկե, վոր Բերլինը շինված է մասամբ ալգալիսի ինֆուզորիաների շերտի վրա: Ահա այդ ինֆուզորիաների նման ել, վորոնք հազար-հազար տարիներ պետք և աշխատելին, վոր կարողանային «նոր կայսերական մայրաքաղաքի» հոյակապ շենքերի հիմքը դրնել, պետք է հազար-հազար մարդկային սերունդներ աշխատելին, վոր կարողանային մեր ժամանակակից քաղաքակրթության հիմքն ստեղծել: Այս կամ այն մարդը չե մեղ հասցրել այս բարձրության, վոչ, այս բոլորի խմբական-հավաքական աշխատանքն է. և յեթե յենթադրենք նույնիսկ, վոր բոլոր այդ գերբնական մարդիկ գոյություն չունենային, այնուամենայնիվ մեք մեք կանգնած թեղից ավելի հեռու կանգնած չեյիք լինի:

*) Ջրի մեջ յեղած մանր վորդեր:

Մեր հակառակորդներն անգիտակցաբար ընդունում են այս բոլորը՝ ցեխի մեջ ձգելով իրենց մարդկային կուռքերը, յեթե վերջիններս դադարում են նրանց ծառայել, ճիշտ այնպես, ինչպես վայրենիները ջարդուփշուր են անում իրենց կուռքերը, յերբ սրանք հրաժարվում են նրանց ցանկացած հրաշքները կատարել: Իր հորեղբոր, զոդի կեղծ յեղբորըրդի **Քոնապարսը**, վոր յերեկ զեռ աշխարհի ամենամեծ «պետական» մարդն էր, այսօր արհամարհված իր յերկրպագուների կողմից՝ վտանահար ընկած է փոշու մեջ, իսկ նրա տեղ իբրև կուռք բարձրանում է **Քիսմարկը**: Բայց յերկար. այդ մենք չգիտենք. մի բան միայն գիտենք, վոր այս կուռքն ել կընկնի և ամենից ավելի անեծքի կարժանանա նրանց կողմից, ովքեր ամենից ավելի ստրկորեն նրան խուսկ են ծխում: Մեր դատողությունն այն ժամանակ կլինի ավելի արդարացի ու ավելի հիմնավոր, քանի վոր չենք հիստորիավի և նրա անկումից հետո ել մեր կարծիքը նրա մասին չի փոխվի վոչ դեպի լավը և վոչ ել դեպի վատը:

Բարեկամներ, ներեցեք, վոր մի քիչ շեղվեցի. յես ցանկացա միայն պարզել թե ի՞նչ անհիմն յենթադրություններն արդյունք է այն հայացքը, վոր իբր թե մարդկային զարգացումն առանձին, հատկապես բարի և չար անհատների աշխատանք է: Ինչ վերաբերում է անցածին, նույնը վերաբերում է նաև ներկային: Հաստատել, վոր ներկա սոցիալական շարժումն ինքնակամ քմահաճ է պատժի արժանի մարդիկ, նշանակում է հակառակ գնալ դիտությունը. այս բանը միայն յերեխաների, տղաների և վոստիկանական հոգիների զլխից

կարող է դուրս գալ. իսկ սրան հավատալ կարող են նամանակաս միմիայն յերեխաները, տղաներն ու վոստիկանական հոգիները:

Մեր ձգտումը— «հեղափոխական ձգտումն է»: Հեղափոխություն. սոսկալի սարսափի նկար յերկու սեռի բոլոր թուլամորթների համար: Այո, մենք հեղափոխական ենք. մենք ցանկանում ենք ժամանակակից հասարակության բարեփոխություն վտարի մինչև զուլա: Մակայն նայենք այդ սարսափի նկարի ուղիղ աչքերի մեջ և սարսափը կըցրվի: Մենք ապրում ենք հեղափոխության մեջ և ապրում ենք շնորհիվ այդ հեղափոխության: **Ամբողջ մարդկային պահուսթուցը՝ մբեսակաճ հեղափոխություն է.** նա ներկայացնում է ծնունդ, աճումն, մշտական փոփոխություն, վորովհետև շարունակ կյանք է արտադրում: Գանի զեռ մարդն ապրում է. նա հեղափոխական է նրանով, վոր անբավական է իր եյությունից, անբավական է նրանով, ինչ վոր ունի, անդադար ձգտում է դեպի բարձրը— հենց այդ բանի մեջ է նրա մարդկային եյությունը: Կղադարի մարդը, կղադարի նաև մարդկությունը հեղափոխական լինելուց, այդ ժամանակ կղադարի մարդը, կղադարի մարդկությունը **գոյություն ունենալուց:** Հեղափոխության, շարժման մեջ է կյանքը, հեղափոխության բացակայության, անգործության մեջ՝ մահը:

Բայց հեղափոխություն բառն ունի մի ուրիշ ավելի նեղ նշանակություն. այդ խոսքի տակ հասկացվում է «**բռնի**» պառակտումն բոլոր պետական և հասարակական ձևերից: Այդ այդպես է. բայց ով է առաջ բերում և ինչից է ծագում այդ բռնի պայթյունը:

Ո՞ւմ վրա և ընկնում բոլոր նախկին հեղափոխություն-
 ցերի պատասխանատվությունը: Արդյո՞ք նրանց վրա, վո-
 ռոնք մարդկային զարգացման որենքների հիման վր-
 ա ձգտում ելին նոր ձև տալ նոր բովանդակությունը,
 նոր արտահայտություն՝ նոր գաղափարներին. — փչչ,
 մեղավորը նրանք են, վորոնք իրենց յեսասիրություն
 կամ կարճատեսություն պատճառով աշխատում են
 խանգարել մարդկային զարգացման ընթացքը: Խնչ-
 պես վտակը, բերում եմ այս թեև հաճախ դործածված
 բայց շատ հարմար համեմատությունը, հոսում և հան-
 դիստ, քանի դեռ նրան խանգարող վոչ մի արգելք
 չկա, իսկ հանդիպելով ժայռերի՝ կազմում և կատաղի
 աղմկող ջրվեժներ, կամ վոչնչացնելով ամեն ինչ իր
 չորս կողմում՝ դուրս գալի ավերից — այդպես էլ հա-
 մաշխարհային պատմության ընթացքը: Միայն այն-
 տեղ են առաջանում սահանքներ, ջրվեժներ, հեղեղ-
 ներ, — ապստամբություն, խռովություն, հեղափոխու-
 թյուն, ուր աճում — մեծանում են խռչնդոտները: Այս-
 պես, ուրեմն, այն բոլոր հեղափոխությունները, ավելի
 նեղ խմատով, վորոնց մասին ավանդում եմ միզ պատ-
 մությունը, առաջ են յեկել վոչ թե այսպես անվան-
 ված հեղափոխականների միջոցով, այլ նրանց ձեռ-
 քով, վորոնք արգելքներ են հարուցել զարգացման
 բնական ընթացքի առջև: Հենց այդ պատճառով էլ
 բոլոր հեղափոխությունները կրում են վո՛չ հաճախո-
 ղական, այլ պատգամողական բնավորություն: Պաշտպանողական և գյուղացիական կռիվը (крестьян-
 ская война) — այդ կռիվը տեղի ունեցավ պաշտպա-
 նելու համար մարդկային ամենատուրը իրավունքնե-
 րը, վորոնք չեյին ընդունվում ավատական (ֆյոդա-

լական) պետություն կողմից, պաշտպանողական էր
 Բասսիլիայի առումը, վոր անհրաժեշտ դարձավ պա-
 լատական զորքերի սպանական շարժումների պատ-
 ճառով. պաշտպանողական էր 1792 թ. ոգոտտոսի 10-ին
 Տյուլիի առումը յեվ սերբուիզմը — այս բոլորն անհրա-
 ժեշտ էր վորպեսզի կուրիլի լինեի պաշտպանել Ֆրան-
 սիան ներքին դավադրությունից և արտաքին հար-
 ձակումներից. հուլիսյան հեղափոխությունը պաշտպա-
 նողական էր ընդդեմ փչացած բուրժուական թագավո-
 րության ազդեցության. մարտի հեղափոխությունը
 ծառայեց վորպես պաշտպանողական միջոց՝ ուղղված
 կամարիլիայի*) ժողովրդի շահերին ֆասսակար դործո-
 ղությունների դեմ. պաշտպանողական էր նաև հու-
 ցիայան կռիվը, վորը պրոլետարիատի վզին փաթա-
 թեց բուրժուազիան՝ ցանկանալով, ինչպես էլ վոր լի-
 նի, խեղդիլ սոցիալիզմը. պաշտպանողական էր նաև
 սեպտեմբերյան հեղափոխությունը, վորն առաջ յեկավ
 ազատելու Ֆրանսիան Սեդանի մոտ տեղի ունեցած
 խայտառակ պետական անակընկալ հեղաշրջման (ре-
 волюция) հետևանքներից. պաշտպանողական միջոցով
 վերջապես առաջ յեկավ կոմունան, այդ վորերդա-
 կան վորձը, վորպեսզի կարելի լինեի ազատել Ֆրան-
 սիական հանրապետությունը այն բանից հետո, յերբ
 Ֆրանսիան մի տարվա մեջ յերկու անգամ մատնվեց
 իր կառավարության ձեռքով:

Այսպես էլ ապագայում չի լինի վոչ մի հեղափո-
 խություն, յեթե վոչ պաշտպանությունն ապատակվի:
 Մենք հեղափոխական ենք. բայց հեղափոխական շար-

*) Թագավորին շրջապատող պալատականներ, վորոնց ազդե-
 ցությունը և ցուցմունքներով վարում է թագավորն իր իշխանությունը:

ժուժը, վորի մեջ և վորի համար մենք գործում ենք միայն այն գեպիում բռնություն կներկայանա և արյունահեղություն կառաջացնի, յերբ այդ կցանկացանք և եր հակառակորդներն, այսինքն կառավարությունը և բուրժուազիան:

Բարեկամներ, այն բանից հետո, յերբ յես ընդհանուր գծերով աշխատեցի ցույց տալ, վոր մեր շարժումն արհեստական յեղանակով չի առաջացել, այլ որդանական կերպով բուսել-ածել և հանգամանքներից, հետևապես չի կարող կանգ առնել, քանի դեռ պատճառները չեն վերացրած, այժմ կաշխատեմ ջոկ-ջոկ քննել այն բոլոր գլխավոր մեղադրանքներն, առարկությունները, հարձակումները, վոր մեր գլխին և թափում մեր թշնամի մամուլը. և վորոնց շնորհիվ աշխատում են մասամբ ձգել մեր կուսակցություն արժանիքը հասարակության աչքում, մասամբ ել պառակտում ձգել մեր կուսակցության մեջ:

Ամենից առաջ նրանք աշխատում են կարգաբանյալ կերպով (սխտեմատիկ) զրպարտել այսպես կոչված «առաջնորդներին», վոր զրկեն նրանց այն հավատից, վոր տածում են դեպի նրանց մնացած ընկերները: «Առաջնորդներն», ասում են նրանք—և մենք ամեն որ կարող ենք տեսնել այս բանը փոքր ու մեծ պաշտոնական բուրժուական թերթերում,—«առաջնորդները» «կերակրվում են բանվորների քրտինքով», «նրանք քեֆերի մեջ են անցկացնում իրենց ժամանակը՝ բանվորների հաշվով»: «Իրենց քաղաքական գործունեության վրա նայում են, վորպես արդյունավետ գործի—պաշտոնի վրա) և այլն. Յես, ի հարկե, ճանաչում եմ այնպիսի մարդկանց, վորոնք չաղանում

են բանվորների քրտինքով և քեֆ են քաշում բանվորների հաշվին և այդ մարդիկ՝ պարոն բուրժուաներն են, վորոնք հարստանում են իրենց վարձու ստրուկների հաշվին, վորոնց աշխատանքի համար լըրիվ աշխատավարձ չեն վճարում. ինչ վերաբերում ե պարոն աստիճանավորներին, գոնե բարձր աստիճանավորներին—քանի վոր ցածր աստիճանավորը պատկանում և պրոլետարների դասին և նրա շահերը պահանջում են պրոլետարի հետ ձեռք-ձեռքի տված առաջ գնալ—յես հարցնում եմ. վորտեղից և դուրս գալիս նրանց պահելու ուժիկը. չե՞ վոր հարկերից. իսկ ո՞վ և վճարում հարկերը, վոչ այլ վոք, յի՞թե վոչ բանվորը. արդյունաբերական-գործարանական ու գյուղական բանվորներն են, վոր վճարում են բոլոր հարկերը, նույնիսկ այն հարկերը, վորոնք ուղղակի հարկերի ձևով չեն առնվում: Թող այդ պարոնները մի նայեն իրենք իրենց: «Ապրել բանվորների քրտինքով»: Պարոն բուրժուաներն իրոք այնքան հիմնավոր կերպով են զբաղվում այս գործով, վոր մեզ համար վոչինչ չի մնում: Յեվ ի՞նչ կարող ես վերցնել բանվորներից: Ներկայիս շահագործության յեղանակը նրան այնքան չի տալիս, վոր նա կարողանա գոնե մի քիչ մարդավարի կյանք վարել:

Յերբ այսպես անվանված առաջնորդները պատկանելին այն մարդկանց շարքին, վորոնք գործում են վոչ թե համոզմունքով, այլ շահագրգռական նպատակներով, այն ժամանակ նրանք կղիմեյին ուր հարկն և այնքեղ, վոսեղից կաբելի յե մի բան ստանալ. կղիմեյին պարոն բուրժուազներին յեվ կառավարություններին, վորոնք ահագին բանակուրյամբ փող ունին:

Նա, ով ուզում է ծախել իրեն, կծախի նրան, ով ամենից ավելի փող կտա: Յեւ չեմ ուզում խախտել այդ հրապարակախոսների հավատը զեպ իրենց ասածը. թեև նրանք իրանց տերերի հանձնարարությամբ են շարժուում մեր յերեսներին այդպիսի մեղադրանքներ, բայց համենայն զեպս նրանք բախտ ունին ծառայելու այնպիսի գործի, վորի մեջ է գտնվում ամենից ավելի և նույնիսկ բոլոր փողերը և վորը կարող է լավ, շատ լավ կերպով վարձատրել նրանց աշխատանքը, և յեթե այդ հրապարակախոսները տաղանդի տեր են—եւ ավելի փառավոր: Պրուսական մամուլի ֆոնդի միլիոնները՝ պետութան և հասարակութան մեջ լավ վարձատրող տեղերն են—բայց այդ բոլորը մեզ համար չէ:

Բոլորովին անկախ նյութական շահից՝ ի՞նչ «առավելութուններ» ունին «առաջնորդները»: Զլինի՞ այն առավելութունը, վոր կովելով առաջին շարքերում իբրև նշան են ծառայում հակառակորդների հարձակման և իշխանությունների հալածանքների համար: Յեւ վոր ավելի վատն է, նրանցից խլված և կանոնավոր աշխատանքը, վաստակը և նրանք դուրս են ձգված կյանքի սովորական ճանապարհից:

Կոիմն ինքն ըստ ինքյան—ինչպիսի անազնիվ հրացանով եւ վոր մղեն մեր դեմ, մենք չե՞մ վոր վոչ միայն քաղաքականապես, այլ և բարոյապես որենքի պաշտպանությունից դուրս ենք համարվում. մեր վերաբերմամբ գործ են ածում. contra haereticos nulla fides. հերետիկոսներին՝ վոչ հավատարմություն, վոչ եւ հավատ: Կոիմն, ասում եմ, ինքն ըստ ինքյան ունի իր և վրդովեցուցիչ կողմը, և գրավչությունը. բայց

ընտանեկան բախտավորության հաճախակի խախտումը, լինել-չլինելու անորոշությունը, մի կտոր հացի հոգսը, վորը յերբեմն հասնում է ծայրահեղ կարիքի,—նախանձելի՞ է արդյոք այս վիճակը:

Ով ծախում է իրեն, նա այդ անում է, վորպեսզի հնարավորություն ունենա ճութ և շուսյլ կերպով ապրելու և վոչ թե նրա համար, վորպեսզի կարիքի մեջ լինի, քաղցած ապրի: Մեր կուսակցության, այսպես անվանված առաջնորդների մեջ յես վոչ մեկին չեմ ճանաչում, վորը շնորհիվ կուսակցության մեջ գրաված դիրքի, նյութական գրկանք կրած չլինի: Յեւ չենք դրա մեջ և աղնվության և անձնագոհության ամենափառապաշտօնայինը: Ի հարկե մեր հակառակորդների համար, վորոնք գործնականության մեջ յեսասիրությունը դարձրել են իրենց միակ ուղեցույցը, իսկ տեսականի մեջ իրենց առաջ բերած քաղաքատնտեսական ուսման անկյան քարը, այդպիսի անձնագոհությունն անհասկնալի յե. նրանք ընդունակ չեն հասկանալու, վոր կան սկզբունքներ և իդեալներ, վորոնք անզգալի են դարձնում կարիքն ու վտանգն այն մարդկանց համար, վորոնք ընդունել են այդ սկզբունքներն ու իդեալները: Փառասիրությունը, մրցությունը, ճիշտ և, ուժեղ խթան են ներկայանում, բայց հազար անգամ ավելի ուժեղ խթան է նրա պարտականության զգացմունքը և իրավունքի գիտակցությունը:

Բարեկամներ, յես այժմ կանգ կառնեմ սոցիալ-դեմոկրատիայի հասցեյին ուղղած այն զանազան մեղադրանքների վրա, վորոնք արվում են յերկու նպատակով. նախ՝ զրգուելու հասարակության կարծիքը մեր դեմ, յերկրորդ՝ թեքելու մեր կուսակցության այն ան-

դամներին, վորոնք փոքրոգի և անհասարատ են իրենց սկզբունքների մեջ: Թե վերջան հաջողվեց նրանց առաջինը՝ մենք այստեղ չենք քննելու: Ինչ վերաբերում է վերջինին՝ թեև այդ ձգտումը բոլորովին զուր է, այնուամենայնիվ չի կարելի բացասել, վոր մեր ընկերները՝ տեղական թերթերի այդպիսի մեղադրանքներին աղդեցության տակ, մի վայրկյան շփոթվեցին: Հայտնի տեղ գրաված լինելով կուսակցական թերթի մեջ՝ շատ անգամ առիթ ունեցա համոզվելու այդ բանի մեջ: Կարգով նայենք այժմ այն բոլոր նշանավոր մեղադրանքները, վոր ուղղում են մեր դեմ:

Ամենից առաջ,—յես սրանից եմ սկսում, վորովհետև հակառակորդների համար սա առաջին տեղն է բռնում,—մեզ մեղադրում են, թե մենք ցանկանում յենք վոչնչացնել սեփականությունը:

Այո, բարեկամներ, սրանից անմիտ սուտ դեռ չի յեղել: Ի՞նչ է սեփականությունը: Բանականություն է գիտություն հիման վրա՝ տնտեսական մտքով արժեքի արտադրության միայն մի աղբյուր կա, դա աշխատանքն է: Միայն աշխատանքն է արտադրում տնտեսական արժեք (ценность): Դրամագույնը (капитал), վոր ըստ բուրժուազիայի վարձկան քաղաքա-տնտեսների՝ արժեքի արտադրության յերկրորդ գործոնն է (фактор), ներկայացնում է ինքն ըստ ինքյան վորպես արդյունք աշխատանքի: Յեվ վորովհետև աշխատանքն է արտադրում արժեք, ուրեմն և այդ աշխատանքն իրավունք ունի իր արտադրած արժեքի վրա: Այսինքն սեփականություն իրավունքը սոցիալ-դմոկրատիայի հիմնական սկզբունքն է: Յուրաքանչյուր բանվոր պե՞տ է

ստանա իր աշխատանքի լրիվ արդյունքը—ուրիշ խոսքով՝ յուրաքանչյուր բանվոր սեփականություն իրավունք ունի իր աշխատանքի ամբողջ արդյունքի վերաբերմամբ: Իմ սեփականությունը թող իմ սեփական աշխատանքի արդյունքը լինի: Յեվ վորովհետև այս սկզբունքից՝ թե յուրաքանչյուրն իրավունք ունի իր աշխատանքի վրա, ծագում է մի ուրիշ սկզբունք—վոչ վոք իրավունք չունի ուրիշի աշխատանքի արդյունքի վրա, ուստի սոցիալիզմը ձգտում է սեփականատեր դարձնել յուրաքանչյուր աշխատավորի և ստիպել քաղցած ֆալու (չեմ ասում քաղցից մեռնելու) նրան, ով կարող է աշխատել, բայց չի աշխատում: Յես չեմ կարծում, թե լինի մեկը, վոր մեզ նման վճռական կերպով պաշտպան հանդիսանա սեփականությունը: Արդեն ներկայումս, յերբ շուքը—փարթամությունը աշխատանքից ավելի է գնահատվում, և մարդկանց նյութական դրությունը հակառակ համեմատական է նրանց աշխատանքի արտադրություն և պարագմունքների ոգտակարություն, մարդկանց ահագին մեծամասնությանը կետք է աշխատի, ասում եմ իսկապես աշխատել վոչ ի սեր բավականության կամ «հոգևոր» կերպով, ինչպես պարոն բուրժուաներն են, ի միջի այլոց, հանաքով իրենց համար հաստատում:—հետևապես հենց արդեն ներկայումս մարդկանց մի ահագին մեծամասնություն՝ սեփականության մասին մեր ունեցած հասկացողության համաձայն, պետք է վոր սեփականատերերից բաղկացած լինել: Սակայն ինչպես պետք է լինի սեփականության մասին ներկայումս տիրող հասկացողության համաձայն,—մեր հակառակորդների սեփականության մասին ունեցած հասկա-

մարդկանց, վերոնք դատաստարտված են բոլորովին
 զուրկ լինելու սեփականությունից:

Թուույիկ կերպով նայենք, թե ինչպես և ներկա-
յումս ստեղծվում սեփականությունը: «Աշխատանքն և
աղբյուր ամեն մի հարստության»,—այս՝ լուսթյամբ
ընդունվում և գիտական քաղաքա-անտեսության կող-
մից: Սրանից հետևում և, վոր վոք վոք իրավունք հու-
նի այն արժեքի (արժեք ունեցող իրի) վրա, վորն
իբեհ սեփական աշխատանքի արդյունքը, կամ ար-
դյունքի համահավասարը չի: Սակայն արդեն ապա-
ցուցած և, վոր բանվորական ուժը և մարդկանց ար-
տաղրական ընդունակությունը մոտավորապես հավա-
սար են միմյանց—մեկը մի քիչ ավելի յե աշխատում,
մյուսը մի քիչ պակաս, բայց միջին թվով այդ ավելն
ու պակասը հավասարակշռվում են:

Սրանից դուրս և գալիս, վոր բոլոր մարդկանց աշխատանքի արդյունքը, յեթե նրանք ոգտվեն արտադրության նույնաման գործիքներով—վորն, ի հարկե, միշտ եւ պատահում և միևնույն ժողովրդի մեջ, — մոտավորապես նույնն է. և հետևապես, յեթե յուրաքանչյուր մարդ ստանար իր անհատական աշխատանքի արդյունքը, ուրեմն բոլորն եւ կունենային մոտավորապես միանման սեփականություն: Բայց, ինչպես ձեզ հայտնի յե, իրականության մեջ այդպես չէ. ընդհակառակը լիակատար անհավասարություն և տիրում: Ինչո՞ւ յի այդպիս: Դուք, բարեկամներ, գըտնըվելով գործարանական քաղաքում, հիանալի միջոց ունեք զիտելու, թե ինչպե՞ս և առաջ գալիս հասարակական անհավասարությունը. ձեզնից յուրաքանչյուրը ճանաչում է վորեւէ գործարանատերի և տեսիլ է,

թէ ինչպէս և նա հարստացել: Վերցնենք, որինակ, իսկական որինակելի բուրժուա Յիմմերմանին Սեմսի-ցից, վորի մասին, հաժանական և, վոր բոլորդ և լսած լինիք—Կրիմիաշառւմ յիս Հեմ ճանաչում և վոչ մի գործարանատերի—քան, թէ յերեսուն տարի առաջ Յիմմերմանը յիկալ Սեմսից այնպես աղքատ, ինչպէս միզնից ամենաղքատը. նրան հաջողվեց մի փոքրիկ գրամագլուխ ժողովել: այն ժամանակ խոշոր արդու-նարերությունն յայպիս զարգացած չեր, իսկ գրամա-գլուխն ևլ կենտրոնացած չեր մի քանի ձեռքերում, և կարելի յեր հարյուր տալերով*) այնպիսի ձեռնարկու-թյուն սկսել, վորն այժմ հազարներով ևլ գլուխ չի գա: «Բախտը նրան ժպտաց»: այսինքն նա պատվերներ ստացավ, վորոնք կատարվումեյին նրա վարձած բան-վորների ձեռքով, բացի այն մասից, վորն իրեն—Յիմ-մերմանին ևր վիճակվում կատարել, քանի վոր բոլորին ևլ հայտնի յի, և հենց այդ պատճառով ևլ այս որինակն այդպէս խրատական և, վոր պարոն Յիմմերմանը վոչ տվիլի, քան միջակ ընդունակության անը մարդ ևր:

Այսպիսով պարոն Յիմմերմանն սկզբում ուներ մի գլուխին բանվոր, հետո հարյուր հատ, վերջերում հազարից ավելի, իսկ այժմ պարոն Յիմմերմանը միլիոնատեր է, հետևապես՝ սեփականատեր comme il faut, այն ինչ նրա բանվորներն ընդադուրկ պրուկտարներ են։ Նա չափազանց ությունը։ Աշխատ

Ինչի՞ վերադրել այս զանազանությունը։ Սակայն
տանքի վորակով բացատրել անկարելի է, քանի վոր
պարոն Յիմմերմանի անհատական աշխատանքը մի-
ջակություն է ներկայացնում. նա, հավանականաբար,
մոտ լավ, և վաղ եւ, ըստ ամենայն հավանականու-

*) $\delta m_{\text{LHPP}} = 1$ p. 50 4 :

թյան, շատ եր աշխատում, քան նրա բանվորներից շատ շատերը: Այնուամենայնիվ նա միլիոնատեր դարձավ, իսկ բանվորները մնացին պրոլետար: Նրա սեփական աշխատանքի յեկամուտը չեր կարող նրան միլիոնատեր դարձնել. յեթե աշխատանքը նրա գործարանում անքան յեկամուտ բերեր, վոր յուրաքանչյուր բանվոր կարողանար միլիոնատեր դառնալ, այդ դեպքում նրա բոլոր բանվորները, կամ առ նվաղն նրանցից շատերը միլիոնատեր դարձած պետք է լինեյին: Սակայն նրանք հենց պրոլետար էլ մնացին: Բայց անա թե բանն ինչու՞մն է, բարեկամներ, պարոն Յիմմերմանն ստանում էր յուրաքանչյուրի աշխատանքի արդյունքի մեծ մասը, իսկ բանվորները՝ փոքր մասը: Պարոն Յիմմերմանի բանվորները պետք է պրոլետար էլ մնային, վորպեսզի Յիմմերմանը միլիոնատեր դառնար: Յեւ յեթե ամեն մի աշխատանք տվող Յիմմերման չի դառնում, բայց համենայն դեպս նրանցից յուրաքանչյուրն ընդհանրապես նույնպիսի միջոցով դառնում է խոշոր կապիտալիստ, ինչպիսի միջոցով վոր պարոն Յիմմերմանը. այսինքն իրենց բացվոցների աշխատանքի միջոցով:

Հետևանքն ակնհայտնի յե, բայց պատճառներն այդքան պարզ չեն:

Յեա հենց նոր գործ ածեցի աշխատանք սվող բառը. իսկապես պետք էր ասել աշխատանք վերցնող: Հին աշխարհը սիրում է աշխատի արտահայտություններ, վորոնք բոլորովին սղավաղում են զաղափարները և հաճախ նույնիսկ հեղաշրջում: Նա աշխատանքատու (աշխատանք տվող) է կոչում նրան, ով ոգտվում է ուրիշների աշխատանքից, իսկ աշխատանքա-

քաղ (աշխատանք վերցնող) նրան, ով իր աշխատանքը տալիս է ուրիշին: Ժամանակակից խոշոր արդյունաբերությունը թույլ չի տալիս, վոր վորեւ մեկը արդյունավոր կերպով աշխատե իր համար իր հաշվով: Նա ստեղծում է շատերի միասին աշխատելու անհրաժեշտությունը. հետո նա պահանջում է արդյունաբերության բարդ մեքենաներ, վորոնց ձեռք բերելն այն բոլոր մարդկանց ուժից վեր է, վորոնք ոգտվում են միմիայն իրենց աշխատանքի յեկամուտով—վորքան վոր այդ աշխատանքը ներկա կարգերի մեջ ընդհանրապես յեկամուտ է տալիս: Սրանից հետևում է, վոր բոլոր այն մարդիկ, վորոնք չունին բավականաչափ դրամագլուխ—կապիտալ,—իսկ այդ բանը արդյունաբերության ներկա դրության մեջ վոչ վոք չի կարող ձեռք բերել իր սեփական աշխատանքով—պարտավոր են ծախելու իրենց աշխատանքը մի յերրորդին, վորն ունի այդ անհրաժեշտ կապիտալը: Այն գինը, վոր տըրվում է այդ աշխատանքը գնելու համար, ներկայանում է վորպես աշխատանք: Յեւ, պետք է իմիջի ալոց նկատել, այդ աշխատավարձով գնվում է վոչ միայն աշխատանքը, այլ դրա հետ միասին նաև բանվորը, վորը չի կարող բաժանվել իրեն աշխատանքից և իրեն աշխատանքի հետ միասին պետք է ծախել ճաշիկ իրեն: Ինչպես գիտեք, գնողը հաստատում է, վոր ինքը ծախվողի «բարեբարն» է. չե՞ վոր նրան «տալիս» է աշխատանք—գործ, դրա հետ միասին էլ հաց, վորը նա ուրիշ կերպ ճարել չեր կարողանա: Այս—այսպես կոչված աշխատանքատուի տեսությունն է: Իրոք, հարցը բոլորովին այլ կերպարանք է ընդունում: Յեթե վոր «բարեբարը» բանվորին տար նրա աշխատածի—արտա-

ըով արդեն ցույց ե տրված: Հաղարավոր տարիներ ե, ինչ մենք ունինք ընկերություն, վորի մեջն ե արմատացած ամբողջ քաղաքակրթությունը—այդ ամուսնությունն ե: Մարդ ու կինը ունին ընդհանուր շահեր: Յես այստեղ վերլուծում եմ այս հարցը միայն տնտեսական տեսակետից: Ձեզնից վորե ե մեկը, բարեկամներ, կարելի չե ստիպված ե յեղել տնտեսուհի պահել: Նա, նշանակում ե, փորձով իմացել ե, վոր՝ մի կողմ թողած բոլոր մյուս անախորժությունները, նրա տնտեսական ծախքերն անհամեմատ շատացել են: Ինչո՞ւ համար: Տնտեսուհին ունի իր սեփական օտար, վորը ուղիղ հակասական ե տանտիրոջ շահին: Նրա առաջին գործն ե լինում իր սեփական շահն ի նկատի առնել: Այդպես չե կինը: «Մարդ ե կին—յերկուսն ել մի սանրի կտավ են», ասում ե առածը: Կինն ել նույն տնտեսական շահն ունի, ինչ վոր մարդը. մարդու ոգուտը՝ կնոջ ոգուտն ե. մարդու փաստը՝ կնոջ փաստն ե: Յեթե կինը խաբուս ե մարդուն, ուրեմն իրեն ե խաբում: Մի խոսքով այստեղ գոյություն ունի շահերի ներդաշնակություն, ե այդ ներդաշնակության մեջ են գտնում յերկու մասերն ել իրենց տնտեսական կոնվը:

Յեով հենց պատճառն ել այդ ե, թե ինչո՞ւ կնոջ հետ տնտեսություն անելն ավելի աժան ե նստում, քան տնտեսուհու հետ: Նույն հարաբերությունն ե նաե ժամանակակից բուրժուական արդյունաբերության մեջ: Այսպես կոչված աշխատատուն ուրիշ շահեր ունի, բանվորն՝ ուրիշ: Բանվորի շահը պահանջում ե, վոր նա քիչ աշխատի այն աշխատավարձի համար, վոր ստանում ե, իսկ այսպես անվանված աշխատատուի շահը պահանջում ե, վոր նա վորքան կա-

րելի չե շատ աշխատանք դժի այն վարձի համար, վոր վճարում ե: Հետո՝ բանվորի շահը պահանջում ե՝ ծախել իր աշխատանքը վորքան կարելի չե կարճ ժամանակով, աշխատանքատուի շահը՝ գնել այդ, վորքան հնարավոր ե յերկար ժամանակով. հետևաբար վորքան կարելի չե յերկարացնել բանվորական ժամանակը՝ հող չտանելով ամենեին, թե բանվորը կարող ե փաստվել ֆիզիքապես ե մտավորապես: Մի խոսքով, թշնամական հակասական շահեր, կատարյալ աններդաշնակություն՝ փոխանակ հայտարարած «ներդաշնակության»:

Թե վորքան գեղեցիկ կերպով բուրժուազիան հասկացել ե—յես վոչ մի կերպ չեմ կարող չհիշել այս մասին,— շահերի իսկական ներդաշնակության տնտեսական ոգուտները, յերևում ե Պարոնեղիպյան շարլատանությունից, վորը նա վաղուց չե ինչ հնարել եր միայն մի նպատակով. ընկերական սկզբունքի արդյունավետ ուժը կախման մեջ գնել կապիտալից: Բանվորը խրախուսված այն գաղափարով, թե ինքն ել մասն ունի արդյունքի—վաստակի մեջ, վորը ծառայում ե միայն վորպես խայծ (հրապուրիչ ուտելիք)՝ ավելի լարված կերպով ե աշխատում, քան սովորական պայմաններով վարձված գեպըում. բացի այդ, յերևակայելով թե իրեն համար ե աշխատում, կաշվից դուրս ե գալիս միայն նրա համար, վոր սովորական արդյունքից բացի՝ այդպիսի լարված գործունեյությամբ ձեռք բերած սովորականից վեր վաստակի առյուծի բաժինն, ընկնի մարդասեր կապիտալիստին, վորը կեղև ե տալիս, միջոցն ստանալու համար: Սակայն այդ ուռկանն ընկնող բանվորների թիվը շատ քիչ ե. ապացույց՝ վոր

մեր բանվորների մասսան հասկացել և արդեն, վոր ընկերակցութեան սկզբունքի թշնամիները՝ ի չարն են գործ դնում այդ սկզբունքն իրենց սեփական ոգտի համար:

Յեա վերադառնում եմ այն մեղադրանքին, վոր իբր թե մենք ցանկանում ենք վոնչացնել սեփականութիւնը, բայց միայն այդ մեղադրանքի մի ուրիշ ձևին. մենք ուզում ենք «բաժանել»: Ի հարկե, բաժանել այն մարդկանց ստացվածքը, վորոնք մի բան ունեն, այսինքն ունեւոր դասակարգերի: Պետք և ասել, վոր վերջին ժամանակները շատ անգամ և պատահել, վոր պրոլետարիատը իր իշխանութեան տակ և ձգել ունեւոր դասակարգերին, հետևաբար հարմար առիթ ուներ բաժանելու, կամ յեթե առանց գեղեցկացնելու ասենք, հափշտակելու նրանց ունեցածը: Բավական և միայն հիշել փետրվարյան հեղափոխութիւնը, մարտի որերը Վեննայում, Բերլինում և ուրիշ տեղերում և վերջապես կոմմունան: Չնայած բոլոր միտումով տարածված ստերին՝ փաստ և, վոր յերեք սեփականութեանն ավելի մեծ հարգանքով չեն վերաբերվել, և յեթե մի կողմ թողնենք մեծ չափերով «բաժանումը», յերեք սեփականութեան գեմ այնքան քիչ հանցանք չի կատարվել, վորքան այդ ճգնաժամերում: Այս բանը յերկու պատճառ ունի. նախ՝ պրոլետարիատը զանազանում և մարդկանց և պայմանները. նա գիտե, յեթե սեփականութիւնը մի ձեռքից մյուս ձեռքն անցնի, դրանով պայմանները չեն փոխվի: Յերկրորդ՝ հեղափոխական ժամանակներում մտքերը հուզված են լինում և ամենափչացած բնավորութիւններն անգամ իդեալական զգացմունքների կնիք են կրում: Վերջի-

նը հայտնի յերևում և (վորն, ի միջի այլոց, ապացուցված և վիճակագրութեամբ) այն հանգամանքից, վոր հեղափոխական ժամանակներում մոշ միայն սեփականութեան գեմ յեղած հանցանքներն են պակասում, այլ ընդհանրապես բոլոր ցած բնավորութիւն ունեցող հանցանքները:

Փարիզում, փետրվարյան հեղափոխութիւնից հետո, բանվորներն այնպիսի հարգանքով եյին վերաբերվում սեփականութեանը, վոր իրենց զաղափարի սրբութիւնը պահպանած լինելու համար՝ **գնդակահար եյին ահում գողերին**: Յեա ինքս 1848 թ. փետրվարի վերջում Տյուրիի պատերի վրա կավիճով գրած հետևյալ բառերը կարդացի «Les voleurs sont mis à mort» — «գողերը կսպանվին»: Այս բանը հիշեցնում և ինձ Գիտտեից հետո՝ գերմանացի ամենամեծ բանաստեղծ Հենրիխ Հեյնեյի գեղեցիկ սրախոսութիւնը. «Բուրժուաները, — մոտավորապես այսպես եր գրում նա Հաուզսուրգի («Allgemeine zeitung») թերթի մեջ գետեղած իր մի նամակում — նայում եյին հուլիսյան դահի անկմանը շատ մեծ սառնասրտութեամբ. բայց յերբ լսեցին, թե գողերը պետք և սպանվին, սարսափելի յերկյուղի մեջ ընկան և պարոնայք Ռոտշիլդներն ու մնացած բոլոր կապիտալիստները փախան Փարիզից, ուր այլևս իրենց անվտանգ չեյին զգում»: Այո, — ահա նրանք: — Չեմ ուզում ասել գողերը, այլ «բաժանողները», իսկական բաժանողները, վորոնք ընդհանուր ժողովրդական դատի յերկյուղից քարացան. դրանք բանվորներ չեն, դրանք սոցիալիստներ չեն. դրանք պարոն կապիտալիստներն են: Հետևապես այդ մեղադրանքն ևլ մենք դարձնում ենք մեր հակառակորդներին:

Թե ի՞նչպէս եւ տեղի ունենում աշխատատուներին «բաժանումն» իրենց բանվորների հետ, արդեն բացատրեցի: Դրանից ավելի մեծ չափով եւ ավելի ակնհայտնի կերպով եւ կատարվում այդ բաժանումը բոսայում (բիրթա). միայն վորսը—թաւաքն ընկնողն ալստեղ վոչ թե բանվորն եւ լինում, այլ ստորին դասի քաղաքացին (мещанин), միջին դասակարգը՝ բառի ամենաընդարձակ նշանակութեամբ: Ի՞նչի մեջ եւ կայանում այդ ընկերական հիմնարկութեան (грюндерство), վորին ծառայում եւ համարյա ամբողջ մամուլը, խաբերայությունը: Նրա մեջ՝ վոր ճարպիկ չարաշահները (спекулянт) կարողանում են պոկել հասարակութեանը, կարգացեք միայն «Լայպցիգյան ամենօրյա թերթի», վորը մնացած բոլոր բաներում անհամաձայն եւ մեր հայացքներին, բոսայական հաշիվները: Այս իրոք գեղեցիկ հոգիւմների մեջ բոսայական չարաշահութեանը (спекуляция) ընտրողում եւ վորպէս իսկական, բայց ժամանակակից գիշատիչ ասպետութուն: Բոսայի չարաշահը բաց եւ անում իր ուռկանը եւ անբախտ ձկներն (пискарь) ընկնելով ուռկանի մեջ, նրա վորսն են դառնում:

Յուրաքանչյուրը ձեզնից լսած կլինի Ստրուսբերգի մասին: Ի՞նչպէս եւ ձեռք բերել նա իր միլիոնները: Ի հարկե, վոչ աշխատանքով, այլ իր տաղանդով—ժուլիկութեամբ ուրիշ մարդկանց փողերը ղըրել եւ իր գրպանը: Բայց չե՞ վոր Ստրուսբերգը՝ սեփականութեան մասին ներկայումս տիրող հասկացողութեամբ, հարգանքի արժանի մի մարդ եւ պրուսական—թագավորական աստիճանավորներից մեկն ոգնում եւ նրան նրա գործունեութեանց մեջ, հետևապէս

նրա գործունեութեանց վրա դրվում եւ պրուսական թագավորութեան պետական կնիքը, վորպէսզի կասկած չլինի, թե այդպիսի ցանկութունը—սերը գեպի սեփականութունը համապատասխանում եւ ժամանակակից հասարակութեան եւ ժամանակակից պետութեան վոգուն:

Անցնենք այժմ այդ խոշոր «բաժանողներին» հայտնի տեսակի մանր բաժանողներին, վորոնց դուք ճանաչում եք ձեր սեփական փորձով: Խոսքս միջնորդների մասին եւ: Զուհական աշխատում եւ ինքն ըստ ինքյան այնպիսի վարձով, վորը նրան քաղցածութեան եւ դատապարտում. սակայն այդ վարձն ել դեռ կրճատվում եւ վորոշ տեսակի մարդկանց պատճառով, վորոնք անյերիսութեամբ միջնորդ են դառնում այդ բանվորների եւ վաճառականի կամ գործարանատերի մեջ: Զուհակը, վոր որական բանում եւ 12, 14, 16 ժամ, տարեց տարի ավելի եւ ավելի յե աղքատանում, այն ինչ այդ միջնորդները, վորոնց միակ աշխատանքն այն եւ, վոր հում նյութը վաճառականի մոտից շուհակի մոտ են ուղարկում եւ պատրաստածը՝ շուհակի մոտից վաճառականի մոտ, շատ քիչ բացառութեամբ միշտ ել հաստանում են: Ինչո՞ւ համար, վորովհետեւ դրանք ցածրացնում են «բաժանումը»: Ուրիշ որինակ փեղցնենք. դուք հիշում եք այն ժողովրդական ժողովը, վոր մենք կազմեցինք Լայպցիգում մի քանի ամիս առաջ՝ ժողովրդական կառավարութեան հայտարարելու համար: Մեր բարեկամ Բերելը ցույց ավեց այդ ժամանակ, թե ինչպէս քաղաքային հարկերը դուրս են բերվում գլխավորապէս չունեորներին—խեղճերի զրպաններից եւ գնում ըսպէս չունեորներին հոգուտ հարուստների. իսկ այդ դուրս բերողներն ել այն հարուստ դասակարգերն են, վորոնց

ձեռքին և գտնվում որեքսքը: Մի այդպիսի բան ել ցույց տրվեցավ նաև Կրիսմիտաուի համար, և յեթե մենք մանրամասն կերպով հետազոտենք այս խնդիրը, կտեսնենք վոր նույն յերևույթը գոյություն ունի այն ամեն տեղերում, ուր կա դասակարգային իշխանություն, ինչպես պետության, այնպես ել համայնքի մեջ: Դասակարգային իշխանության հենց բնույթի մեջ և գտնվում այն, վոր նա գործ և զնում իր իշխանությունը իր մասնավոր շահերի և իր դասակարգի ոգտին: Հենց այդ պատճառով ել մեք կովում եմք դասակարգային իշխանության գեմ, վորը բոլոր սոցիալական չարիքների յեվ սրանցից առաջացած քաղաքական անկանոնությունների արմատն է:

Մի խոսքով՝ մենք չենք, վոր ցանկանում ենք «բաժանել»: այս մեղադրանքն ել յետ ենք դարձնում մեզ մեղադրողներին: Մենք սկզբունքով հակառակորդ ենք «բաժանման», ինչ ձևի տակ ել վոր կատարվի այդ: Սոցիալ-դեմոկրատիան ցանկանում և «բաժանողներին» զրկել իրենց արհեստից «բաժանողներին», վորոնք իրենց են վերցնում բանվորի աշխատանքի արդյունքի խոշոր մասը, «բաժանողներին», վորոնք հափշտակում են մանր սեփականությունները «բաժանողներին», վորոնք հարկերի միջոցով քամում են ժողովրդական ուժերը: Այդ «բաժանողներին» ավագակային խումբը (шайка), մորեխի նման խճում և պետության, համայնքի, բոլոսայի, արդյունաբերության և վաճառականության (չէ՞ վոր վաճառականությունն ել այս շրջանի մեջ և մտնում) մեջ յեղած աշխատանքի պտուղները: մենք ցանկանում ենք պաշտպանել հասարակությունը, աշխատանքը: Մենք ցանկանում ենք պաշտպանել սեփականությունը:

Մի բան ել. ինչպե՞ս են ներկայացնում իրենց մեր հակառակորդները հենց այս «բաժանումը», վորն այդպես համառությամբ աշխատում են մեզ վրա ձգել:

Միթե նրանք բանվորներին այնքան պարզամիտ են համարում, վոր կարծում են, թե բանվորն իր գըրությունը բարվոքած կլինի, յեթե պետությունը ձեռնարկեր բաժանել ստացվածքներն անհատների թվի համեմատ: Քսան հինգ տարի յե արդեն, վոր յես մասնակցում եմ սոցիալ-դեմոկրատիական շարժման և դեռ մեր ընկերներից վոչ մեկին չեմ հանդիպել, վորն այդպիսի վողորմելի տգիտություն ցույց տար: Յուրաքանչյուր բանվոր գիտե, յեթե արդյունաբերության ժամանակակից յեղանակը շարունակվի մնալ և մենք այդ դեպքում հավասար մասերի բաժանենք բոլոր գոյություն ունեցող արժեքները—անշարժ կալվածներն ու շարժական կապիտալը—անհատների թվի համեմատ, հասարակության եյությունն այս բանից իսկի ել չի փոխվի. դրանով հետևանքները հեռացրած կլինենք իսկույն, բայց պատճառները կմնան նախկին ուժի մեջ և անպայման առաջ կը բերեն նախկին հետևանքները:

Յեթե բաժանումը տեղի ունենա և հավասարությունը վերականգնվի մեքենաբար, այն ժամանակ այդ հավասարությունը՝ գոյություն ունեցող տնտեսական որևէքների ազդեցությամբ, նորից կոչնչանա որդանական կերպով. և յերկար չի տևի, ինչ անհավասարությունը համառությամբ իր իրավունքների մեջ կըմտնի կրկին: Մենք ել հանկարծ նախկին դրության մեջ կհայտնվենք և ստիպված կլինենք նորից «բաժանելու»: Վոչ, այդպիսի հիմարությունները չեն կարող ծագել սոցիալ-դեմոկրատի գլխում: Սոցիալ-դեմո-

կրատիան հասարակութեան վրա նայում և վորպես կենդանի որդանիգմի և վոչ վորպես մեռած մեխանիգմի վրա. այնպիսի որդանիգմի, վորն ամեն մի անհատական, կենդանական կամ բուսական որդանիգմի նման յենթական և մշտական փոփոխութեան և վորն ավելի ցածր գրութեանից զարգանում ու ավելի բարձր գրութեան և հասնում. միայն այն զանազանութեամբ, վոր հավաքական որդանիգմը, վորին մենք հասարակութուն անունն ենք տալիս, անմահ և, հավիտենական և և բոլոր ճգնաժամների (кризис) միջից ել, վորոնք թանձրամիտ ու փոքրոգի մարդկանց կարծիքով նրան մահացու հարված պիտի հասցնէին, դուրս և գալիս վերանորոգված և թարմ ուժերով: Մենք վոչ թե մեքենական, այլ որդանական փոփոխութեանների ենք ձգտում: Վարձու աշխատանքի ձևը—սխտեմը, վորի վրա հիմնված և ժամանակակից հասարակութունն իր անարդարութեաններով, պետք և վոչնչացնել և նրա տեղը դնել ընկերական աշխատանքի սխտեմը, վորն ապահովում և յուրաքանչյուրին իրեն աշխատանքի արդյունքը, և դրանով արգելք դնել կապիտալին՝ աշխատանքը շահագործելու: Մասնավոր խոշոր կապիտալներ հավաքել—դիզել՝ կարելի չէ միմիայն՝ այդ շահագործութեան միջոցով: Այս պատճառով ել՝ գոյութուն ունեցող մասնավոր կապիտալների եքսպրոպրիացիան անհրաժեշտութուն չի ներկայանում. արդյունաբերական ընկերութեանները (ассоциация) վորոնց հետ՝ վաճառականութեան բոլոր շրջանները գրաված՝ սպառողական ընկերութեանները ձեռք ձեռքի տված պետք և առջ գնան — աստիճանաբար կուլ կըտան մասնավոր կապիտալը և այն ժամանակ վոչ մի

անհրաժեշտութուն չի լինի բռնի խմրական— մասսայական եքսպրոպրիացիայի: Պարոն կապիտալիստներն այն ժամանակ պետք և մտնեն ընկերութեան մեջ. հակառակ դեպքում նրանց կապիտալը կմնա իրրե մեռած տարր և ոգուտ չի բերի վոչ իրենց, վոչ ել հասարակութեանը: Այնպես վոր այդ դեպքում, իհարկե, թե նրանց սեփական շահի և թե հասարակութեան շահի տեսակետից՝ ոգտավետ կլինի, յեթե որենսդրութեանը միջոցներ ձեռք առնի այդպիսի անմիտ ընդիմութեան դեմ, միջոցներ, վորոնք ներկայումս ձեռք են առնվում շոտլոդ—փչացնողների, տկարամիտների, մի խոսքով անխելահասների դեմ: Բայց ինչ վոր ել չլինի, հենց վոր հասարակութունն արդյունաբերութեան և սպառման վերաբերյալ, հետևապես արհեստագիտութեան և վաճառականութեան մեջ կաղժակերպված կլինի ընկերական հիմունքների վրա, մասնավոր կապիտալի կենսական ջիղը կտրված կլինի և կապիտալը կմեռնի քրքտած*) ծառի նման, իսկ ստեղծող աշխատանքը կսկսի այդ ժամանակ նոր և նոր արժեքներ ստեղծել և կը կրկնապատկի ու կտասնապատկի մեռնող կապիտալը:

Իսկ մեզ ասում են—այն ել գերմանական քաղաքատնտեսները, վորոնց մեջ կան նույնիսկ գիտնականներ, ինչպես ուսուցչապետ Բոշերը կայացրիցի—նույնիսկ հաստատում են, վոր արժեք ստեղծելու

*) Մեզանում ծառը քշտում են, վորպեսզի ավելի լավ աճի. սակայն կա մի ուրիշ տեսակ քշտել ել, վոր գործ են դնում տմբիկական ազարակալանները. կլսում են ծառի կեղևը մարդաշափ բարձրութեամբ և ծառը չորանում—մեռնում և, և այս բանն անում են, անտառներում, վորպեսզի հողը մշակեն. չե՞ վոր մեռած ծառը նյութ չի ծծի հողից:

համար՝ աշխատանքը միակ գործոնն է ներկայանում. կան յերկու ուրիշ գործոններ. բնության ուժերը և կապիտալը: Այս տեսությունը պարզ ապացույց է, թե դասակարգային նախապաշարունակները վեր աստիճանի սահմանափակ և անադնիվ են դարձնում մարդկանց և վորքան քիչ են նույնանում ուսումնականությունն ու մտածողությունը: Ինքն ըստ ինքյան հասկանալի է, վոր մենք առանց բնության ուժերի՝ չենք կարող աշխատել. հենց ինքն աշխատանքը վոչ այլ ինչ է՝ յեթե վոչ բնության ուժերից ոգտվելը: Առանց հողի, վորի վրա կանգնում եմ, առանց ողի, վորով շնչում եմ, չեմ կարող մատս բարձրացնել. բնության ուժերը աշխատանքի անհրաժեշտ պայմաններն են. բայց առանց աշխատանքի այդ ուժերն անկարող են ստեղծել հասարակական արժեքներ (այնպիսի արժեք—գին ունեցող իրեր, վորոնք պետքական են բոլորին), և միայն շնորհիվ աշխատանքի նրանց գաղտնի էն անհրաժեշտ արդյունաբերություն համար: Ուստի և բոլորովին անհիմն է նրանց աշխատանքի օտրում գասել, իբրև արդյունաբերական գործոն: Սակայն մենք այստեղ գործ ունինք ավելի շուտ սխալ արտահայտություն, քան թե միտումավոր-տեղեկացիող անձնություն հետ, վորի վրա մենք անշուշտ կարող ենք մատնանիշ անել՝ առաջարկված յերրորդ գործոնը—կապիտալը նայելիս: Կապիտալն, ի հարկե, ոգնում է արդյունաբերությունը, նպաստում է նաև նրա դարգացմանը, բայց քանի վոր կապիտալը ներկայացնում է զիզած աշխատանք՝ կամ ավելի ձիշտ՝ աշխատանքի զիզած արդյունք, ուստի և չի կարելի նրան դնել աշխատանքի շարքում՝ իբրև ինքնուրույն գործոն. նա

միայն միանում է «աշխատանք» գործոնի հետ և վերջինիս մի մասն է կազմում: Ամենահասարակ որոշվածով բանող բանվորի ամենաաննշան աշխատանքի մեջ, ի միջի այլոց, գտնվում է հազարավոր տարիներ ի կուտակված քաղաքական աշխատանք. և այդ կապիտալը, վորը պարոն քաղաքատնտեսները չեն հաշվել իբրև արդյունաբերություն գործոն, վորովհետև այդ բանի կաբիքը չեն զգում, այն, այդ կապիտալն անվերջ նշանակալից է արդյունաբերության համար, քան թե սովորական կապիտալը:

Վերադառնալի ավելի պարզ ցույց տամ, վոր իսկապես աշխատանքն է կապիտալ ստեղծում և վոր կապիտալն առանց աշխատանքի վոչինչ է և ամեն բանով պարտական աշխատանքին, յերևակայենք, թե մի սարսափելի ջրհեղեղ է պատահել, վորը սրբել է յերկրի յերեսից բոլոր բանվորներին, գլխավորապես չար սոցիալ-դեմոկրատներին. իսկ պարոն բուրժուաներն իրենց բոլոր կապիտալներով, գործարանների շենքերով, մեքենաներով, փառավոր պալատներով և թանկագին իրերով սղատ են մնացել այդ ջրհեղեղից—չեն վնասվել:

Ինչ կլինեն հետևանքը. կամ իրենք կապիտալիստները պետք է յկսեյին աշխատել, կամ հանձն առնեյին սովից մեռնել վոսկինների մեջ, հունական առասպելի մեջ հեշտակված թագավորի (Միդաս) նման, վորը նույնպես, վիրավորական չլինի, ելի ականջներ ուներ: Վերցնենք այժմ հակառակ դեպքը. գիցուք ջրհեղեղը ջնջեր յերկրի յերեսից բոլոր կապիտալիստներին—ի հարկե, յես նույնիսկ հասարակ յենթադրություն մեջ էլ նրանց վոչ մի վնաս չեմ ցան-

կանա. նրանց կարելի չե տեղափոխել վորեն ասողի վրա (որինակ Վինեբրայի վրա), վորտեղ Դանաեն տեղավորեց իր մեռնող հոգիներին—այսպես, յենթադրենք կապիտալիստներն իրենց բոլոր կապիտալներով չքացան յերկրի յերեսից, բանվորները մնացին առանց մեքենաների, առանց վորեն կապիտալի, առանց գործարանների՝ ունենալով իրենց հետ այնքան ուտելու պաշար, վոր բավականանա նրանց մինչև հետևյալ հունձը: Ի՞նչ կլինեի հետևանքը: Բանվորներն իրենց համար գործիքներ կշինեյին, տներ կշինեյին, կվարեյին հողը, փոսեր կփորեյին հանքերում, և մի քանի տարվա ընթացքում վոչնչացած կապիտալը նորից կվերականգնեի և չքացած կլինեի ջրհեղեղի վերջին հետքն անգամ. բանվորներն անհամեմատ բախտավոր կապրեյին, քան ապրում էյին առաջ, ազատված կլինեյին իրենց առաջվան տերերից, կունենային կապիտալ՝ առանց կապիտալիստների դատակարգի:՝ հարկե, ինքն ըստ ինքյան հասկանալի չե, վոր յեթե շնորհիվ բնության վորեն պատահարի, կամ ուրիշ պատահարի՝ բուրժուազիան վոչնչացած լինեի այն բոլորի հետ միասին, ինչ վոր իրեն և պատկանում, կենդանի մնացածներից վոչ մեկն այնքան միամիտ չեի լինի, վոր նրան—բուրժուազիային նորից արհեստականորեն կյանք տար: Հերիք ե. այս յենթադրական ուրինակը պետք եր միայն ցույց տալու, թե բանվորը կապիտալիստի կարիք չի զգում և առանց նրան՝ իրեն շատ ավելի լավ կզգար. իսկ կապիտալիստն զգում և բանվորների կարիքը և առանց զրանց չի կարող գոյություն ունենալ՝ գոնե վորպես կապիտալիստ: Մեկ ել կրկնում եմ. մենք չենք ցանկանում «բաժանել» և

հեռու ենք այն բանից, վոր ցանկանանք բաժանել կապիտալիստների հետ. մենք վճռականապես ուզում ենք խանգարել, վոր կապիտալիստները չբաժանեն բանվորների հետ. իսկ այս բանին ցանկանում ենք հասնել՝ ընդհանուր ընկերական աշխատանք մտցնելով:

Կարելի՞ չե արդյոք այս ձգտումը ցնորական (Утопический) համարել. միթե փորձով արդեն ցույց չի տված, թե ինչպես արդյունաբերություն և վաճառականություն մեջ ընկերական սկզբունքը գործնականապես իրականություն և գտել: Այդ ձևի **ԲՆԳԽԱՆՈՐ ԽԱՍԱՏԱՆՈՒՅՈՒՆԸ** փողի հարց ե, ուրիշ վոչինչ: Իսկ փողի հարցը իր լուծումն պետք ե ստանա բարի կամքի հարցով: Ինչպես հայտնի չե, արդյունաբերական **ԲՆԿԵՐՈՒՅՈՒՆՆԵՐԷ** համար Լասսալը պահանջում եր 100 միլիոն տալերի*) պետական ոժանդակություն, վորով և կատաղի աղաղակներ առաջացրեց բուրժուազիայի շարքում, վորի աչքերի առաջ ընդհանուր սընանկություն պատկերացավ, հենց վոր բավարարություն տրվեի այդ պահանջին: Բավական և Լասսալի թյուն տրվեի այդ պահանջին: Բավական և Լասսալի ցույց տված գումարը թե վոչ, չեմ ուզում այժմ պարզել—համեմայն դեպս դա աննշան դատարկ բան ե՝ համեմատած այն միլիարդների հետ, վորոնք դուրս են շարտում լուսամուտներից անարդյունավետ, քաղաքակրթության ֆեասակար և բարորություն քայքայող նպատակների համար: Նայեցեք, որինակ, մշտական գորքի ահագին բյուջեյին. այն գորքի, վորը ծառայում ե միայն պաշտպանելու գոյություն ունեցող պետական և հասարակական ի չարը գործ զրվող դեպքերը, և պատկերացրեք այն հազար միլիոնները, վոր

*) Տալերը 1 ու. 50 կ.:

կլանեց վերջին պատերազմը, վորն առաջ յեկավ սոցիալիզմից ունեցած յերկյուղի պատճառով: Իրոք, ինչ եւ չարժենա հասարակական վերածնութիւնը, ավելի լավ պայմաններ ստեղծելն այնքան չի արժենա, վորքան արժենում է մեր այժմյան պայմանների պահպանութիւնը:

Շարունակենք:

Մեզ մեղադրում են կոմունիզմի մեջ, վորը նույնանում է նախորդ մեղադրանքին. յես թողցիկ կերպով կշռափեմ այս խնդիրը: Ի՞նչ են ներկայացնում իրենց մեր հակառակորդները կոմունիզմ բառի տակ: Այն, վոր ծուլերը և նրանք, ովքեր չեն աշխատում, ցանկանում են ապրել ընդհանուրի հաշվով: Այո, բարեկամներ. այդ կոմունիզմը գոյութիւն ունի ցերեկայումս. դա պետութեան և հասարակութեան հիմնական սկզբունքն է. և հենց դրա գեմ է ուղղված ամբողջ սոցիալ-դեմոկրատիական շարժումը: Իրոք, կոմունիզմը բոլորովին ուրիշ, նույնիսկ հակառակ նշանակութիւն ունի, յես ասում եմ իրոք, վորովհետեւ իրենք կոմունիստները կոմունիզմն այս մտքով են հասկանում: Վնչ, կոմունիզմը չի նշանակում աշխատավորների շահագործվելը ծուլերից, բանողներին՝ չբանողներից. կոմունիզմը նշանակում է, վոր մասնավոր շահերը պետք է յենթարկվեն ընդհանուր շահերին. անհատականութեան ազատութիւն ընկերակցութեան մեջ. իսկ ինչ վերաբերում է մասնավորապես սեփականութեան, կոմունիզմը ձգտում է սեփականութիւնը ընդհանուրի բաժին դառնել. հետևապէս՝ վոչ վոչնչացումն սեփականութեան—քանի դեռ ապրում են մարդիկ, գոյութիւն կունենա նաև սեփականութիւնը. —այլ սե-

փականութեան ընդհանրացումն, վորով յուրաքանչյուր վո՞ր սեփականութեան իրավունք կունենա, այն ինչ այդ իրավունքն այժմ պատկանում է բնակչութեան միայն մի աննշան մասին: Ահա միմիայն այս մտքով, ճիշտ ըմբռնեցեք այս գաղափարը, մենք, ի հարկե, ձգտում ենք կոմունիզմի:

Հետևյալ մեղադրանքի համար, վոր ձգում են մեր վրա, կրավականանամ մի քանի նկատողութիւններ միայն անելով: Մեղանվանում են «XIX դարու բարբարոսներ», իբր թե մենք ձգտում ենք խորտակել «քաղաքակրթութիւնը», իբր թե սոցիալ-դեմոկրատիայի հաղթութիւնը՝ «քաղաքակրթութեան (цивилизация) վոչնչացնելու» մեջն է: Այն կուսակցութիւնը, վորի ծրագիրը ձրի ժողովրդական կրթութիւն է պահանջում և առհասարակ ձրի մասնակցութիւն—բոլոր կրթական և դաստիարակչական հիմնարկութիւնների, այդ կուսակցութիւնը չի փնտրի այդպիսի մեղադրանքից, թեև վորոշ տեսակետից մեղավորութիւնը մեզ վրա ենք վերցնում: Այո, մենք ուզում ենք խորտակել այն, ինչ վոր մեր հակառակորդները «լուսավորութիւն», «քաղաքակրթութիւն» են անվանում. մենք ցանկանում ենք խորտակել ստրկութիւնն ու ճնշումը. մենք ցանկանում ենք խորտակել մարդկանց մեջ ցանած ատելութեան և յերկպառակութեան սերմերը, մենք ցանկանում ենք խորտակել տգիտութիւնը, մտավոր խավարը, վորին մատնված է մեր յեղբայրների անագին մեծամասնութիւնը: Այո, պարոն բուրժուաներ, տգիտութիւնը մենք ցանկանում ենք խորտակել, մենք, ձեր «լուսավորութեան-քաղաքակրթութեան» թշնամիները: Ձեր քաղաքակրթութիւնը բաղաճակրութիւն

հենց հակասութիւնն է. դուք կարող եք ազատել ձեր այդ քաղաքակրթութիւնը՝ ժողովրդին տգիտութեան դատապարտելով, ամօթալի կերպով թաքցնելով նրանից իսկական քաղաքակրթութեան գանձերը, փակելով նրա առաջ կրթութեան տաճարի դռները, ահա ձեր ձգտումը: Գիտութիւնը, վորը դուք մի քանի ընտրյալների մոնոպոլիա եք դարձրել, և վորոնց մի կտոր հաց անգամ չեք տալ, հենց վոր այդ գիտութիւնը դադարի շոյել ձեր քմահաճութիւններն ու փայփայել^{*)} ձեր շահասիրութիւնները— ահա այդ գիտութիւնը մենք ցանկանում ենք դարձնել բոլորի սեփականութիւն. իսկ այս բանը կիրականանա այն ժամանակ, յերբ առաջ կգա իսկական ժողովրդական զարոցների սխտեմը— վորը չի ներկայանա վորպէս կենդանիների վարժեցնող մի հիմնարկութիւն, ինչպէս են ներկա ժողովրդական դպրոցները, վորոնք ծաղր են այդ կոչ-ժողովրդական դպրոցները, վորոնք ծաղր են այդ կոչ-մանը, և ուր ուսուցիչները ֆիզիքապէս, իսկ աշակերտները մտավորապէս ստիպւած են քաղցից մեռնել. ուր աղքատների յերեխաների առաջ շարժուած են վորոք մեկի փշրանքներ, վորոնք մտքի սննդառութեան համար չափազանց անբավարար են, և ուր գիտութիւնն ամենափոքր չափով և տրվում: Վոչ. մենք ցանկանում ենք մտցնել ժողովրդական դպրոցներ յեղանակը՝ այդ բառի իսկական նշանակութեամբ. դպրոցներ ժո-

*) Յերբ յիս այս ճառն ասում եյի, չղիտեյի դեռ, վոր Ֆեյերբախը սովամահ լինելու եր դատապարտւած: Մի կողմից՝ քաղցից մեռնող Ֆեյերբախը, իսկ մյուս կողմից ազատամիտ բուրժուազիայի կողմը՝ իմաստակ «ստոր, անպիտան քահանա Գոլինգերիւսը»—այս հերիք և մեր բուրժուական աշխարհի «կրթութիւնը» բնորոշելու համար:

ղովրդի համար, վորոնք բոլոր յերեխաներին պետք և կրթութիւն մատակարարեն ամենալայն չափով: Վորոնք պետք և ոժանդակ են յուրաքանչյուր մանուկի բոլոր ընդունակութիւնների առաջ գալուն ու դարգանալուն և վոչ, ինչպէս այժմ և, ուր յերեխաները վերջացնում են իրենց կրթութիւնն այնպէսի հասակում, յերբ իսկապէս ասած դեռ նոր պետք և սկսւելիք այդ կրթութիւնը: Սոցիալիզմը «թշնամի յի քաղաքակրթութեան». չլինի՞ այն պատճառով, վոր հետաքրքրութիւն և տալիս յուրաքանչյուր տաղանդի զարգանալուն: Քաղաքակրթական առաջադիմութեան վորպիսի գործը խթան և գտնվում հենց միմիայն իսկական ժողովրդական կրթութեան փաստի մեջ: Տաղանդները հավասարաչափ կերպով բաժանված են մարդկանց մեջ—այս ճշմարտութիւն և, վորի մասին չի կասկածում և գիտութիւնը, վորով պետք և վոր մենք առաջնորդվենք, վորովհետեւ նա և սոցիալիստական և դեմոկրատիական աշխարհայացքների հիմքը, բայց ժամանակակից հասարակութիւնը միմիայն մի աննշան փոքրամասնութեան և թույլ տալիս զարգացնել իրեն ընդունակութիւնները և հենց այդ փոքրամասնութեանն և, սակավ բացառութեամբ, նա տալիս և միակողմանի, սղավաղված կրթութիւն: Ներկա պայմանների պատճառով տաղանդների մի ահագին մեծամասնութիւն խեղդվում է: Հաճախ դարմանում են, թե ինչպէս վորոշ ժամանակաշրջանում բավական շատ հայտնի մարդիկ են յերեւան գալիս: Այդ—հենց այն ժամանակաշրջաններն են, ուր քնած տաղանդներին հետաքրքրութիւն և տրվում զարթնելու և գործ կատարելու: Առանձնապէս այդ բանը պատահում է հեղա-

փոխական ժամանակաշրջաններում, յերբ նոր գաղափարները և նոր կարգերը պաշտպանելու համար՝ նոր ուժերի պահանջ է զգացվում: Նայեցեք, որինակ, այն պետական մեծ մարդկանց, ճարտասանների, դորափաշների ահագին խմբին, վորոնք ֆրանսիական հեղափոխության փառքն ու պատիֆն են կազմում: Այգլիսի ժամանակներում տաղանդներն ավելի շատ չեն, քան թե սովորական ժամանակներում, բայց—քաղաքատնտեսական արտահայտություն ասեմ,—**սաղաճզճերի ափելի մեծ պահանջ է զգացվում:** Դեպքն ստեղծում է վոչ միայն գողեր, այլ նաև «մեծ մարդիկ»: «Մեծ մարդը» նույն սովորական մարդն է, վորը «մեծ» է դառնում դեպքի բերմամբ: Այս բոլորն ասում եմ միմիայն ցույց տալու համար, թե ինչպես անվերջ կերպով հարկավոր է ոժանդակել մեր քաղաքակրթության դարգացմանը, յեթե հասարակությունը յերբիցե իրեն ամենաբարձր խնդիրը կհամարե, վորքան կարելի յե, զարգացնել բոլորի տաղանդները, հետևաբար, ամենաբարձրը կրթություն ապահովել և բոլորի համար: Մենք ցանկանում ենք ազատել գիտությունը և մասշտիբ դառննել բոլորից. նա ել չպետք է շղթաների մեջ մնա կապկպված և նրան ծառայողներն այլևս չպետք է աղքատության և անառակության դատապարտվեն: Այն, մենք ցանկանում ենք խորտակել ձեր քաղաքակրթությունը—խորտակել՝ վորովհետև նա թշնամի յե իսկական քաղաքակրթության, վորովհետև նա հաշտվել չի կարող իսկական քաղաքակրթության հետ, վորովհետև նա բռնի կերպով ստիպում է գիտությանը ծախվել հարստությանը և իշխանությանը. վորովհետև նա, հիմնված լինելով անարդարության վրա՝ ուղղակի

անբարոյական է և դուք գիտություն անառակությանը միացրիք կհոջ աճառակությունը—կնոջ անառակությունը, մեր կեղծ քաղաքակրթության ամենազգվելի բիծը:

Յեվ պոռնկության հասարակության ներկայացուցիչներն անամոթաբար մեղադրում են մեզ—և այդ նրանց մեր դեմ ուղղած հետագա առարկությունն է, վոր իբր թե մենք ցանկանում ենք վոչնչացնել ընտանիքը, բազմակնություն և «ազատ սեր» մտցնել: Իրոք—ազատ սեր՝ այն, ցանկանում ենք. մենք ցանկանում ենք ազատել սերն այն շղթաներից, վորոնցով կապկպել է նրան ժամանակակից հասարակությունը. բայց ինչ վերաբերում է մեր հակառակորդների առաջ բերած բազմակնության, ընտանիքի վոչնչացնելուն, դրանով նրանք իրենց պատկերն են տեսնում հայելու մեջ: Նրանք մեղադրում են մեզ իրենց սեփական հանցանքների մեջ: Հեռու լինելով բազմակնության ձգտելուց՝ մենք ցանկանում ենք վոչնչացնել ներկայումս տիրող բազմակնությունը: Հեռու լինելով ընտանիքը վոչնչացնելու ցանկությունից՝ մենք մեզ ներստակ ենք դրել ազնվացնել ընտանիքը, վորն այժմ ցած և ցած է ընկնում և իր մաքրությունը անհասանելի իդեալ համարվում ամբոխի համար. և մենք ցանկանում ենք հասնել այն բանին, վոր նա իր որհուրթյունը թափե բոլորի վրա: Շատ-շատ ուրախ եմ, վոր այս ժողովում տեսնում եմ հենց կանանց ել. դա ապացույց է, վոր կանայք հասկացել են, թե վորքան մոտ է նրանց սոցիալական շարժումը, թե վորքան մեծ շահ ունին նրանք մեր սկզբունքների հաղթանակից: Ներկայումս շատ են խոսում այսպես կոչված կանանց

հարցի մասին: Մեզ համար առանձին կանանց հարց չկա և չի ել կարող լինել, վորովհետև մարդկանց շահերը համեմատել են դեպ միմիանց: Կանանց հարցը մեծ սոցիալական հարցի մի մասն է. վերջինիս հետ նա ել կվճռվի, իսկ առանց սրան՝ յերբեք: Ով ձգտում է կնոջ ազատագրության՝ չվճռելով կռիւլ հանուն ընդհանուր սոցիալական ազատագրության՝ նա մի անհուսալի խճճված աշխատանքի է ձեռնարկում: Սակայն նա, ով կռվի յե յելնում ընդհանուր սոցիալական ազատագրության համար, կռվում է միևնույն ժամանակ նաև կնոջ ազատագրության համար: Յեւ իրոք, միմիայն կնոջ դրութիւնը ժամանակակից հասարակության մեջ հերիք կլինե՛ր արդարացնելու համար սոցիալական շարժումը և մահու փառավճիւր կարգադրու այն հասարակությանը, վորն այդպիսի պայմաններ է առաջ բերում: Ո՛ւր է այն «ընտանիքի սրբութիւնը», վորի մասին մեր հակառակորդներն առակներ են ասում: Զվորոնենք արդյոք այդ այն հարցուր հազարավոր պոռնիկների մեջ, վորոնք լիքն են թե մեծ և թե փոքր քաղաքների փողոցներում և ծախում են իրենց մարմինը նրան, ով ամենից շատ է վճարում այդ մարմնի համար: Միմիայն Բերլինում 20,000 պոռնիկ են հաշվում և Բերլինը մյուս քաղաքներից «անբարոյական» չէ: Զե՛ վոր Գերմանիայում, Անգլիայում, Յըրանսիայում, Ամերիկայում—ամեն տեղ, ուր գոյութիւն ունի դասակարգային հակասութիւն, ուր աղքատության և հարստության մեջ մեծ խորիւրտաւ կա, ուր մարդկանց մարդկանցով շահագործվելը սովորութիւն է որեւէ քաղաքում, այդ ամեն տեղերում մեր աչքի առաջ կանգնած է անառականոցային չարիքը:

Պոռնկանոցը վոչ տեղային, վոչ ել ազգային յերևույթ է—վոչ մի ազգ իրավունք չունի փարիսեցու նման լըվալ իր ձեռքերը և ասել. «Փառք Աստծո, ես այնպես վատ չեմ, ինչպես մյուս ազգերն են»: Պոռնկանոցը սիրող պայմաններէ աճեցած է հեղաշրջում. նա բուրժուական ամուսնության լրացուցիչ մասն է, նրա զգվիլի յերկվորյակն է, նա ներկայանում է վորպես ընդհանուր հասարակական հիմնարկութիւն, ուստի և ծիծաղում է այն ամեն ջանքերի վըրա, վորոնք գործ են դրվում վերացնելու նրան ժամանակակից հասարակության միջից: Շատ-շատ նա թույլ է տալիս բարոյականության կեղծ պաշտպանութիւն և տալիս բարոյականության կեղծ պաշտպան վոստիկանությանը քշել իրեն հրապարակից դեպի հեղաշրջանութիւն: Քանի դեռ հարցուր հազարավոր փողոցներ: Քանի դեռ հարցուր հազարավոր աղջիկներ ուրիշ յելք չեն ունենալ, յեթե վոչ կամ քաղցից մեռնել և կամ ծախել իրենց փողով պոռնկանոցը գոյութիւն կունենա: Նա կանհայտանա միայն այն ժամանակ, յեր յուրաքանչյուր մարդու հնարավորութիւն կտրվի ազնիւ կերպով ապրելու, իսկ դրա համար անհրաժեշտ է, վոր բարենորոգվին ժամանակակից հասարակութիւնն ու արդյունաբերության ժամանակակից յեղանակը: Ամենաբնկած պոռնիկ կինն արժանի յե մեր կարեկցության և համակրանքին. նրա ժանի յե մեր կարեկցության վողբերգութիւն է, պատմութիւնը մի հասարակական վողբերգութիւն է, վոր ցնցում է նրան, ով իր կրծքում մարդկային սիրտ է կրում, և ով կարողանում է կարգաւ մարդկային սիրտ է կրում, և ով կարողանում է վատ որինակը, ընտաւը: Վատթար կրթութիւնը, վատ որինակը, ընտաւը զրկվելը, քաղցը—ահա թե ինչն է ձգում նընիքից զրկվելը, քաղցը—ահա թե ինչն է ձգում այդ պոռնկանոց. ով կհամարձակվի քար ձգել այդ ընկած արարածների, հասարակության այդ անբարոյ

հարկե, այստեղ մի եական տարբերութիւն կա. այն, ինչի համար վոր ծախում ե իրեն վարձու ստրուկը, հասարակական անհրաժեշտ աշխատանքն ե, վորը մի-միայն շնորհիվ այն հանգամանքների, վորոնց մեջ կատարվում ե, դառնում ե անեծք ընտելորների համար, այն ինչ, ինչի համար վոր ծախում ե իրեն պոռնիկ կինը, ամենախայտառակ պղծումն ե սիրո և միևնույն ժամանակ պղծումն մարդկային բնութիւնը: Սերը—**ՇՆՈՐԻՎՈՒՄ Ե.** նա չի կարող իրեն ծախել: Իսկ յեթե նա իրեն ծախում ե, լինի դա ամուսնութեան մեջ, թե ամուսնութիւնից դուրս—**ՃԱ ՎՈՐՈՆԿԱԳՆՈՒՄ Ե:** Մարդու և կնոջ մեջ յեղած ամեն մի ընկերութիւն՝ վորը տեղի յե ունեցել սիրո միջոցով, յեթե նույնիսկ որհնված չե քահանայի ձեռքով—իսկական ճշմարիտ ամուսնութիւն ե:

Սակայն կինը ժամանակակից հասարակութեան մեջ ազատ չե մարդկային ապրանքի մշուս ձևից ել: Արդյոք ազան կապիտալը, վորի խորթակը ավելի յե բարձրանում, քանի զոհեր ե կլանում, վարձու ստրուկութեան շղթաներով չի՞ կաշկանդել նաե **ԿՆՈՋԸ**, ինչպես վոր տղամարդին. և չի՞ ձգել նրանց բանվորական բանտերը (**бастилия**), վորոնք գործարան անունն են կրում: Յեվ դրանով չի՞ խորտակել փաստորեն (**фактически**) բանվոր ժողովրդի «ընտանիքը»: Բայց այս դեռ բոլորը չե: Կապիտալը իր անկշտութեամբ **ՅԵԿԵ-ԽԱՆԵՐԻՃ** նույնիսկ քաշում—ձգում ե իր մարդակերութեան սեղանի վրա:

Մարդ, կին, յերեխաներ—բոլորն ել վարձու ըստրուկներ են: Ո՞ւր ե արդյոք ընտանեկան «ոջախը», առանց վորին անհասկանալի յե ընտանեկան կյանքը:

Չնահած այս բոլորին՝ կապիտալը կուրծքը ծեծում ե և աղոթում յերկնքին, վոր նա—յերկնքը պաշտպանի նրան չար սոցիալ-դեմոկրատներից, վորոնք ցանկանում են վոչնչացնել ընտանիքը: Ո՞ր, դուք կեղծ բարեպաշտներ:

Բանվորն ընտանիք չունի. դուք գողացել եք նրա ընտանիքը: Սակայն նա **ԳԱՆԿԱՆՈՒՄ Ե** ընտանիք ունենալ, վորպեսզի մարդ դառնա. և հենց այդ պատճառով ել նա սոցիալ-դեմոկրատ ե:

Աշխատանքը մարդկութեան ամեն մի առաջադիմութեան հիմքն ե. միմիայն շնորհիվ աշխատանքի մարդուն հաջողվեց բարձրանալ կենդանիներից, ազատվել բնութեան ստրկութեանից: Բայց ազատութեան միջոցը փոխվեց, ճշման միջոց դարձալ: Փոխանակ աշխատանքի միջոցով ազատ դառնալու՝ բանվորն աշխատանքի ստրուկը դարձալ: Հենց այդ աշխատանքի ստրկութեանից ե, վոր պետք ե ազատված լինի բանաստրկա, ներկայանա վորպես մեռած մեքենայից կախ ընկած մի մաս և կոչվի ջուհակ, հյուսն, մեքենայագործ: Նա պետք ե մարդ լինի, վոր ջուհակութեան, հյուսնութեան ե անում, մեքենաներ ե շինում, վորպեսզի կատարի իր հասարակական պարտականութեանները:

Սակայն բանվորը, վոր որական 12, 14, 16 ժամ անց ե կացնում արհեստանոցներում, գործարանում ե հաճախ շատ հեռու յե ապրում աշխատելու տեղից, ժամանակ **ՅՈՒՆԻ ՄԱՐԳ ԳԱՆՈՒՄ** ծանշված ու ջարդված նա տուն ե վերադառնում, պառկում ե քնելու և հետևյալ առավոտը՝ դեռ չհանգստացած նախորդ որ-

վան հոգնածությունից, նորից վազում ե աշխատելու։ Սա մարդկային կյանք չէ. նույնիսկ հազիվ կենդանական կյանք։ Վոչ մի դյուղացի չի համաձայնի այսպես տանջել իր ձիերին, իր աշխատող տավարին։ Բայց մարդն ավելի համբերատար է կենդանուց և բարեախտարար ավելի կենսունակ։ Յեվ ահա հենց նրանով, վոր ժամանակակից հասարակությունը քայքայել է ընտանիքը, վոր ստորացրել է կնոջը, ավելի զբաղանով քան իր մնացած հանցանքներով զրկել է իրեն ապագայում ապրելու իրավունքից և ստորագրել է իր մահվան դատավճիռը։ Այն հասարակությունը, վորը պոռնկանոցը դարձրել է պաշտոնական հասարակական հիմնարկութուն, իրավունք չունի առանց կարմրելու բարոյականութուն բառն արտասանել, այդպիսի հասարակությունը դատապարտված է և պետք է կորչի ճնշվածների սրտում ապրող բարոյականության մարդկային զգացմունքի ալեկոծության տակ։

Կինը, վոր ավելի քնքույշ նյարդեր և քնքույշ զգացմունքներ ունի, քան տղամարդը, ավելի խոք կերպով է զգում իր ստորացումը, քան թե տղամարդը։ Յեվ հենց այդ պատճառով էլ կինը մեծ վոգեկություն մար է մասնակցում սոցիալիստական շարժման, վորը նրան ազատություն է արժանապատվություն է խոստանում։ Դրա համար էլ հենց կանայք, շատ ժանակ չեն անցել, ինչ կոմունայի հերոսական կռվի մեջ այնպիսի բարձր դիրք էյին գրավել։ Չհեղ մայրերը ծծի յերեխաները ձեռքներին համառ կերպով կանգնել էյին արագածից հրացանների գնդակների տակ և քաջալերում էյին իրենց մարդկանց։ Որիորդները վրա էյին հասնում, վերցնում այն զրոշակները, վորոնք

ընկնում էյին մեռնող բուզավորների (բուզ հագած) ձեռքից և, առանց մահվան յերկյուղի, տանում ուղիղ թշնամու հանդեպ, մինչև վոր իրենք էլ ընկնում էյին՝ հարվածվելով կարգ ու կանոնի պաշտպան հարբած զինվորների ձեռքով։ Հարյուրավոր գերված կանայք և որիորդներ հպարտությամբ և համառությամբ ընդունում էյին մահացու վերք և մեռնում էյին «կեցցե կոմունան» գոռալով և արտահայտելով իրենց ատելությունը հաղթողներին։ «Զգվելի հրդեհածիգներ», «հասարակաց կանայք—պոռնիկներ», «զգվանք հարուցանող ընկածներ» մոնչում եր միաձայն հետադեմ բուրժուական մամուլը։ Դա ստոր մարդկանց հերյուրած, հիմարների սարքած մի խայտառակ հեքիաթ էր, բամբասանք, վորն այժմ ժխտված է մեր ավելի ազնիվ հակառակորդների հենց իրենց կողմից։ «Հասարակաց կանայք»։ Անկասկած նրանց մեջ կային դրանցից, բայց «հասարակաց կանանց» ամենաաննշան մասն եր նրանց մեջ։

Սակայն միթե կոմունան նրանց դարձրեց այդպես։ Վոչ, պարոն բուրժուաներ*), այդ ձեռ հասարակությունն եր, ամենալավ աշխարհը յեղածներից, վոր նրանց վրա զրեց խայտառակության կնիքը՝ պղծելով, ապականելով նրանց։ Կոմունան հնարավորություն տվեց նրանց նորից բարձրանալու և ազատելու իրենց ձեռ հասարակության ցեխից։ Յեվ դուք դեռ զարմանում էլ եք, վոր դեպի կոմունան տաժած նրանց բոցավառ վոգեկությունը, դեպի հին հասարակությունը տաժած սարսափելի դեմոնական ատելությունը մղեց

*) Այս տոնական ժողովում ներկա էյին նաև բավականաչափ հակառակորդներ։

նրանց դեպի կոիվ. վոր նրանք՝ այդ կես-հրեշտակ, կես-ֆուրիա արարածները, ցանկանալով նրան պատճառած անարդարության վրեժն առնել՝ դեպի մահ էյին դիմում հանուն սուրբ գործի, վորպեսզի գրանով քավեն իրենց խայտառակ կյանքը: Այո, այդ դեն ձգված, կանացիությունը կորցրած արարածների մեջ՝ «մշտական կանացիականը» գլուխ բարցրացրեց և խայթեց ձեր հասարակությունը:

Դուք ասում եք, վոր քրիստոնյաներ եք. բայց արդե՞ք դուք մոռացել եք, թե ինչպես ձեր Գրիստոսն ամոթահար արեց այն կեղծավոր բարեպաշտներին, վորոնք քարկոծել էյին ցանկանում մեղավոր կնոջը: Յեվ դուք դեռ համարձակվում եք հայհոյել նրանց մեռնելուց հետո ել, ձեր հասարակության այդ զոհերին, նոր վարդապետության այդ նահատակներին. վարդապետության, վորն ստրուկներին ցույց և տալիս իրենց ճորտության վախճանն, իսկ կնոջը՝ պոռնկանոցի վախճանը:

Դուք, բարեկամներ, լավ հասկացաք, վոր կանանց հարցն անքակտելի կերպով կապված է ընդհանուր սոցիալական հարցի հետ և վոր մեզ համար առանձնապես մեծ նշանակություն ունի կնոջը մեր շարժման մեջ քաշելը—ձգելը: Գործարանական բանվորների և արհեստավորների պրոֆեսիոնալ միությունը, վորը բռնել է նաև Կրիմմիտշտուն, զանազանություն չի դնում տղամարդու և կնոջ աշխատանքի մեջ և այդ ձևով—փաստորեն ընդունելով, վոր յերկու սեռերն էլ հավասար իրավունքների տեր են—ավելի շատ բան է արված կնոջ ազատության հարցի նկատմամբ, քան ինչ վոր արել են մեր բոլոր «կանանց ընկերություն»

ները» միասին վերցրած, թեև վերջիններս իրենց համարում են «կանանց հարցի» մի տեսակ կապալառուներ:

Կինը ներկայանում է վորպես անհրաժեշտ լրացուցիչը տղամարդու. առանց կնոջ տղամարդը չի կարող մարդ լինել, առանց կնոջ մասնակցության նա չի կարող իրականացնել և վոչ մի իդեալ. և հենց այդ պատճառով էլ մեր շարժման համար անհրաժեշտ է կրնոջ ոգնությունը: Նրանց պարտականությունն ու շահերը պետք է վոր ստիպեն նրանց կովելու մեր շարքերում: Կանայք ամենից ավելի են զգում ժամանակակից հասարակության ամբողջ սարսափը, հետևաբար ամենից ավելի յեւ, ըստ ամենայն հավանականության, կհասկանան սոցիալական ազատագրության ընդհանուր ոգնությունը: Ուստի և թող վոչ մի կին, վոչ մի աղջիկ յետ չկանգնեցնեն իր մարդուն, իր սիրելուն այդ շարժումից, ընդհակառակը թող բորբոքեն, վոգևորեն նրանց, ամբացնեն նրանց ուժերը, յերբ նրանք կըսկսեն թուլանալ: Յուրաքանչյուր մայր նմանապես թող քարոզի իր վորդիներին ազատության և հավասարության ավետարանը, վորպեսզի աճի այն սերունդը, վորը մարդկային արժանիքի հպարտ գիտակցությամբ հրաժարվի տեր և ստրուկ ճանաչելուց:

Բարեկամներ, ինձ մնում է մի մեղադրանք էլ հերքել, վորով կըվերջացնեմ ճառիս այդ մասը: Ասում են, վոր մենք ցանկանում ենք խորտակել բուրժուազիան և նրա ավերակների վրա ստեղծել բանվոր դասակարգի իսխանությունը: Մեր ծրագիրը բացասում է այս մեղադրանքը: Ճիշտ է, վոր մենք ցանկանում ենք խորտակել բուրժուազիայի իշխանությունը, բայց

միմիայն այն նպատակով, վորպեսզի խորտակենք ընդհանրապես դասակարգերի ամեն մի իշխանություն: Բուրժուազիան չափում է մեզ իր արշինով. նա դեն շարտեց ավատական (ֆեոդալական) պետությունը, վորպեսզի նրա տեղ առաջ բերի բուրժուական պետություն: Նա մի դասակարգային իշխանությունը փոխարինեց մյուսով: Պրոլետարիատի նպատակն ուրիշ է, ավելի բարձր է: Նա այնքան շատ է տանջվել դասակարգային իշխանության ճնշման տակ, վոր չի կարող նրան — դասակարգային իշխանությանն սկզունքով թշնամի չլինել: Սակայն վճիռ դասակարգի վրա կցանկար իշխել պրոլետարիատը. չէ՞ վոր նա «ամենացածր դասակարգին» է պատկանում, հետևապես չունի մի դասակարգ, վորի վրա կարողանար իշխել և վորին կարողանար շահագործել: Մեր ձգտումն այն է, վոր բոլորն էլ նույնանման իրավունքներ և պարտականություններ ունենան: Ինչպես վոր համերաշխությունը վերացրեց ցեղերի, ազգերի (վերջինիս վերաբերյալ յեթե վոչ քաղաքականապես, գոնե տնտեսապես ու մտավորապես) սահմանները, ճիշտ այդպես էլ նա պետք է վերացնի դասերի ու դասակարգերի սահմանները, վորպեսզի մարդկությունը հնարավորություն ստանա ազատ զարգանալու: Այն ժամանակ էլ չեն լինի շահագործողներ ու շահագործվողներ. էլ չեն լինի տերեր և ստրուկներ. էլ չի լինի իշխանություն և ստրկություն: Կարգ ու կանոն հավասարության՝ փոխանակ անկարգության մեջ:

Ահա, թե ինչ ենք ցանկանում մենք. և վճիռ ազնիվ մարդն անարդարացի կգտնի մեր այս ցանկությունը:

Այսպիսով յես քննեցի մեր հասցեյին ուղղած բոլոր գլխավոր մեղադրանքները և ապացուցեցի նրանց անհիմն լինելը: Յես ցույց տվեցի, վոր այս բամբասանքները — զրպարտությունները ներկայանում են վորպես հենց իրեն—բուրժուական հասարակության ծաղրանկարը (карикатура). այն հասարակության, վորը իր անմաքուր խղճի ազդեցության տակ՝ իր գրեզոված յերեակայության մարախուղի մեջ իր իսկ սեփական հրեշավոր պատկերն է տեսնում: Յես ցույց տվեցի, վոր այն, ինչի մեջ վոր մեղադրում են մեզ հին հասարակությանը ներքող կարդացողներն ու այդ հասարակության ներկայացուցիչները, վոչ այլ ինչ է, յեթե վոչ նույն այդ հին հասարակության մեղքերը, արատներն ու հանցանքները: Յես ցույց տվեցի, վոր «բաժանումը», «բազմակնությունը» սխտեմատիկ կերպով գործադրվում է միմիայն հին հասարակության մեջ: Յես ցույց տվեցի, վոր հենց հին հասարակությունն ինքն է, վոր վոչնչացնում է սեփականությունը, խորտակում է ընտանիքը, զրկում է ժողովրդին քաղաքակրթության որհնությունից, ի չարն է գործ դնում լուսավորությունը — քաղաքակրթությունը և վրնասում նրան: Յես ցույց տվեցի, վոր մենք, սոցիալ-դեմոկրատներս բուրժուազիայի վերաբերմամբ՝ ներկայանում ենք վորպես առաջապահ մարտիկներ հանուն սեփականության, ընտանիքի քաղաքակրթության, մարտիկներ՝ ընդդեմ «բաժանման», «բազմակնության»: Յես ցույց տվեցի, վոր հենց մենք ենք, վոր ցանկանում ենք առաջ բերել աշխարհում յերկպառակության և անկարգության փոխարեն ներդաշնակություն և կարգ: Մի խոսքով՝ յես ցույց տվեցի, վոր մեր հակա-

ռակորդների բոլոր մեղադրանքներն ել մենք կարող ենք յետ շարունակ իրենց յերեսին: Մենք կովում ենք վոչ թե սեփականության գեմ, այլ հացուց սեփականության, վոչ թե ընտանիքի գեմ, այլ հացուց ընտանիքի, վոչ թե քաղաքակրթության գեմ այլ հացուց քաղաքակրթության, վոչ թե կարգ ու կանոնի գեմ, այլ հացուց կարգ ու կանոնի, վոչ թե ներդաշնակության գեմ, այլ հացուց ներդաշնակության:

Յես ցույց տվեցի, վոր բանվորական շարժումը մի քաղաքակրթական շարժում է, վորը իր ծագմամբ պարտական է վոչ թե պատահականության, խաղի կամ կամայականության, այլ բնական անհրաժեշտության և հենց բնական անհրաժեշտությանը ել պետք է վոր հաղթի: Յես ցույց տվեցի, վոր միմիայն տնաստեղծները և տգիտությունը կարող են կասկածել սոցիալ-դեմոկրատական շարժման իրավացի լինելու մասին և վոր ամեն մի աշխատանք, ճիգ ու ջանք այդ շարժումը կանգնեցնելու նույնքան անհուսալի և անմիտ է, վորքան յեղի ճիգն ու ջանքը սլացող շոգեշարժը (ЛОКОМОТИВ) կանգնեցնելու համար: Ինչպես վոր շոգեշարժն առաջ կսլանա այն բոլոր արգելքների վրայով, վորոնք կհանդիպեն նրա ճանապարհի վրա, այդպես ել սոցիալ-դեմոկրատական շարժումը:

Յեով այս բանը պետք է հասկացած լինեյին մեր հաղաղակորդները, նրանք պետք է վոր հասկացած լինեյին թե իրենց օտեքի պահանջով հենց պետք է խուսափեն ամեն մի պատահարից—կատաստրոֆից: Ժամանակակից աշխարհը հանգստանալ չի կարող: Ծահերն ընդհարվում են միմիանց, վորի հետևանքը լինում է դատարարների կոփը և պատերազմ: Միթե այսպիսի պայ-

մաններն արժանի յեն այն ջանքին, վորը գործ է դրվում այդ պայմանները պահելու համար: Մեր հաղաղակորդներին կարելի յե յերկու կատեգորիայի բաժանել մի մասը կովում է մեր դեմ իր օգիտության պահանջով, իսկ յերկրորդ մասը՝ չարամտության: Առաջիններին ես կասեմ.

Ծանոթացե՛ք մեր շարժման հետ: Դուք կգաղարեք վախենալ նրանից, յերբ կճանաչեք նրան: Վախն ամենավատ խորհրդատունն է: Այն կարմիր տեսիլը, վորը սարսափեցնում է ձեզ, բոլոր այդ տեսիլների նման անգիտության արդյունք է և չքանում է խելքի փորձառու աչքի առաջ: Տնտեսական պայմանների ծանոթությունը մի կողմն է քշում վոչ միայն վախն, այլ նաև մոլեռանդությունը: Գիտությունը մոլեռանդություն չգիտե: Գիտությունը կրքերի չի դիմում, նա բացասում է նրանց, նա ուսումնասիրում է: Նա գիտե, վոր բոլոր յերևույթներն ել ունին իրենց հիմնավոր պատճառները. նա աշխատում է հետադուրս այդ պատճառները, բայց յերբեք չվիճել յերևույթների հետ: Թող ինձ ցույց տան վորեւ անցած քաղաքակրթական շարժում, վորը հաջողեցրած լինին կանգնեցնել և վորը վերջի վերջո հաղթած չլինի հաղաղակորդներին: Ինչո՞ւ համար են այդ հաղաղակորդներն անհաջողությունները նորից մեր վերաբերմամբ գործադրում: Արդյոք ժամանակակից սերունդը իր գիտությունը պատմությունից չէ՞ ձեռք բերել: Միթե մենք պետք է ամեն մի վաղուց ձեռք բերած փորձ՝ նորից ինքեքս մեզ վրա կրենք: Այդ դեպքում պետք է վոր սուտ լինեք ամեն մի գիտություն, ամեն մի մարդկային առաջադիմություն:

Մի անգլիացի պետական մարդ մի անգամ ասաց, վոր կուսակցութեւնների պատմութիւնը—փոխադարձ զիջումների (կոմպրոմիս) պատմութիւնն է: Մինչև վորոշ կետ՝ այդ բոլորովին ճիշտ է: Ափսոս միայն, վոր իշխող կուսակցութիւնները վճռում են կոմպրոմիսի դիմել մեծ մասամբ միմիայն այն ժամանակ, յերբ ընդդիմութեան բոլոր միջոցներն ել սպառված են լինում և այնքան կորցրած են լինում իրենց ուժը, վոր կոմպրոմիսը կատարյալ սնանկութիւնն է ցույց տալիս:

Յեթն իշխող կուսակցութիւնը սրամիտ և խելոք յե, կոմպրոմիսի կղիմն ամեն անգամ, հենց վոր ժողովրդական հարձակողական շարժման հանդիպի:

Միմիայն այդպիսի կոմպրոմիսներով—ճիշտ հասկացեք այդ խոսքի նշանակութիւնը. կոմպրոմիս նշանակում է՝ այնպիսի մի դրութիւն, յերբ փոխանակ սուր կերպով հաշիվները վերջացնելու անցյալի հետ, կուսակցութիւնների համաձայնութեամբ ստեղծվում է մի անցողական դրութիւն—այսպէս, միմիայն մի շարք այդպիսի կոմպրոմիսներով, հետևաբար բարենորոգումների միջոցով կարելի յե սոցիալական շարժման խաղաղ յիւրն ապահովել և հին աշխարհից նոր աշխարհ մի անցումն ստեղծել՝ խնայելով, վորքան կարելի յե, ներկայումս իշխող դասակարգերի շահերը:

Հենց այդ պատճառով ել այդպիսի կոմպրոմիսն ավելի մեծ նշանակութիւն ունի ներկայումս արող դասակարգերի շահերի համար, քան մեր շահերի՝ քանի վոր մենք առանց կոմպրոմիսի ել կհասնենք մեր նպատակին, ամենայն հավանականութեամբ, նույնիսկ ավելի շուտ: Մենք զեռ կարող ենք կոմպրոմիսի դիմել՝ ինկատի ունենալով մարդասիրական զգացմունքն.

այն ինչ մեր հակառակորդները կարող են դիմել այդ բանին միմիայն անձնական շահերից դրդված: Յանկա-նոնում ենք մենք արդոք կոմպրոմիս անել, թե վոչ, այդ անյքան ել նշանակութիւնն ունի ի միջի ալոց, իսկ թե զլուս կզա այդ բանը, թե վոչ, բացառապէս կախված է մեր հակառակորդներից: Յեթն բուրժուազիան կցանկանա կոմպրոմիսի դիմել, այն ժամանակ այդ կոմպրոմիսը զլուս կզա՝ անկախ այն բանից, թե մենք ցանկանում ենք այդ բանը, թե վոչ: Բուրժուազիան է կառավարում ուղղակի կամ պետութեան միջոցով զորքը, կապիտալը, մամուլը. մի խոսքով՝ իշխացում է կառավարում ուղղակի կամ պետութեան միջոցները: Հետևաբար նրա ձեռքին է նրանից և կախված վերջ դնել—լուծել սոցիալական խնդիրը կոմպրոմիսի և բարենորոգումների ճանապարհով: Նրան մնում է միմիայն ցանկանալ: Բայց վորպէսզի ցանկանա, պետք է նախ հասկանա, վոր ներկա պայմանները հիմնված են անարդարութեան վրա և անհիմն են: Հենց այդ պատճառով ել յե դարձյալ ասում եմ մեր ազնիվ հակառակորդներին, ուսումնասիրեցեք սոցիալական խնդիրը: Հաւանալ սոցիալական խնդիրը մեռնակում է լուծել այդ խնդիրը: Մփինքսի հանելուկը մարդն էր. մարդն է ներկայումս նաև սոցիալական խնդիր հանելուկը: Մինչև վոր մարդու մասին յեղած հանելուկը չլուծվի, աշխարհը չի խաղաղվի, և սոցիալական խնդրի սփինքսը կշարունակի ցույց տալ հասարակութեանը նրա սարսեցուցիչ տեղը և ձգել նրան մի սարսափից մշուսի մեջ:

Միթե հին և նոր աշխարհների մեջ յեղած խոր-խորատը պետք է լցվի դիականերով: Չե՞ վոր տա-

փաստանքների հրդեհը, վորից ժամանակակից հասարակությունն աշխատում է ազատվել, գոյություն ունի միմիայն հասարակության յերևակայության մեջ և միմիայն յերկրագործի ազդեցության տակ կարող է իրականության փոխվել: Միթե անհնարին է մի այնպիսի կամուրջ շինել, վորը հավատարիմ կերպով անցկացնի մեզ նոր աշխարհը:

Մենք անկարող ենք այդ բանն անել: Մեր հակառակորդները կարող են այդ բանն անել, և յեթե նրանք անեն այդ, մարդկությանը հավիտենական ծառայություն արած կլինեն:

Յեւ վերջացնում եմ: Մեր անելիքը մեզ համար ատ պարզ է: Մենք առաջ ենք գնում այն ճանապարհով, վորը ցույց է տալիս մեզ մեր պարտականությունը: Հիշելով Noblesse oblige*) նշանաբանը՝ մենք յերբեք չենք մոռանա, վոր մեր գործը մարդկության շփորձն է: Ինչ լուծումն էլ վոր տրվի, մենք ընդունում ենք: Մենք ազատ ենք անձնական ասելությունից: Նույնիսկ մեր թշնամու մեջ մենք հարգում ենք մարդը: Իսկ ձեզ, բարեկամներ, յիս ցանկանում եմ հիշեցնել.

շեցնել. շարունակեցեք հանգստությամբ և անդուլ կերպով աշխատել ձեր ընկերության մեջ, մի հոգնեք ձեր գործունեյության մեջ, տարածեցեք մեր գաղափարները — և յեթե յերբ և իցե կզգաք, վոր թուլանում եք, հիշեցեք ազնիվ Յակոբին, վորը յերբեք չէր տատանվում, յերբ նույնիսկ նրա չորս կողմում ամեն ինչ տատանման մեջ էր. հիշեցեք նրա խոսքերը: «Ամենասակավաթիվ բանփորական ընկերության կազմակերպությունը քաղաքակրթության ապագա պատմարանի համար ավելի մեծ գին կունենա, քան թե Սաղովայի մոտ անգլի ունեցած կովի որը»:

*) Ազնվությունը պարտադրում է — ազնիվ գործը բարձր պարտականություններ և դնում մարդու վրա:



ԳԻՆՆ Ե 30 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0210244

